



Գեղագիտական, Կրթական, Հասարակական, Քննադատական, Բաղարարական
Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ Հ Ա Ն Դ Է Ս

Բաանվեցերոդ սարի ՅՈՒՆԻԱՐ № 1. 1915—XXVI
Հասցեն՝ Тифлис, Редакция „ТАРАЗ“. Tiflis (Caucase), Direction „TARAZ“

Խմբագրությունը յոդանները կրճատում է, ենթարկում
փոփոխության և չբարձրացնում (եթե քերից պակաս)
չի վերադարձնում:

անճանական անսակցություն խմբագրի հետ
ԵՐԵՎԱՆԻ և ՈՒՐԱՆԻ առ ժ. 11—12:

Յայտարարվում ընդունում է ամեն լեզուով Տարազի
յայտարարական աղբ առաջին կրկն 40 կ., վերջին 25 կ.
մանրատու (պրակա): Արտասանմանից կրկնակի Շատ
անգամ կրկնողներն՝ առանձին համաձայնություններ:
Աղբիւր-Տարազ ամսական 33 կ.
Տարազի ներկայ Ձ-ը (VI-րդ հրատ.) 1 ր.

©

Խմբագրությունը—Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, տ.
№ 41, բաց է ամեն օր (բացի տոն և կիրակի օրերից)
առ. 10՝, ժ. մինչև 2-ը կեսօրից յետոյ:
Голов. пр., 41 Տեղեֆոն 16—90

ԲԱՅԻՆԾ Է 1915 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ



33-րդ տարեշրջանին
1915 թ. նոյնպես կը
հասի հա մատուց
անդատանո . զը-
ւարթ ու սր ծառ
իր կարկաչով մեր վարդ ու մանուշակ,
չաչուն ու յամիկի դարնանարոյր մա-
նուկներին ուսուցանելով իր նման յը-
տակ ու անհատ անդադրում սուրբ
աշխատանք, չընկճելով ոչ մի խո-
չընդոտի առաջ իր նպատակը իրակա-
նացնելու, այն է՝ համեկ բարի հա-
խանձ դեպի վեհմե ու ազնիւր և
խաբել չարից, զեղից, վատից լի-
նել անվեհե, կառասպ ձեռնարու-
րեան, յագրանակին, որին հասնելու
միակ ճշմարիտ գեղերն են գիտութեան
ու արեւսք:

XXXIII — 1915 — XXXIII



Տարեգրքի հրատարակման արժեքը	Տարեգրքի հրատարակման արժեքը	Տարեգրքի հրատարակման արժեքը	Տարեգրքի հրատարակման արժեքը
10 ր.	5 ր.	5 ր.	5 ր.

XXVI — 1915 — XXVI

26-րդ իր տարեշրջանին, **ՏԱՐԱԶ ՀԱՅ ՄԻԱԿ**
ԻՒՂԻԹՏՐԵՍԻՑՆԵՐ կը շարունակե արտա-
ցուել շԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՇԽՈՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ-ՔԱ-
ՂԱՐԱԳԻՏԱԿԱՆ-ՔՆՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ-ՀԱՄԱՐԱԿԱՆ
ԿԱՆ-ԹԱՏՐՈՆԵԿԱՆ ԵՐԼՓՑՑԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ
ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ: Իբրև հմայիչ, շքեղ ու
փարթամ հրատարակութիւն **ՏԱՐԱԶ** հայտնի է մէջ
չունի մրցակից: **ՏԱՐԱԶ** հատաշխարհային մասու ի
մէջ ճանաչում է իբրև հուշակատր եւ շքեղ հրատարակութիւն:
Ներկայ 1915 թ. ՏԱՐԱԶ լոյս է տեսնելու աւելի ևս
ստուար ծառայով ու աւելի ևս նմայիչ:

Արեւստը լինի նա արտադրուած բանաստեղծի վառ շըր-
թանքներով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրա արտիագնող
վիպագրի գրչով ՏԱՐԱԶՈՒՄ տառջին տեղն ունի:

ՔՆՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ մեր առօրեայ, հասարակական կեանքի
լինի նա արտադրուած վէպով, պատմամով, ֆելիտոնով, թէ
կատակով ՏԱՐԱԶի գրական-մամանակագրական մասը պիտի
կազմէ:

ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՆԿԱՐՆԵՐ, ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ թէ արդի և թէ
անցած գնացած, մանաւանդ մեր կեանքի, ՏԱՐԱԶի մէջ բոնում
են մեծ տեղ:

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՂԲԻԻՐԻ տարեկան բաժանորդագրին	»	»	1 ր.
ՏԱՐԱԶԻ	»	»	4 ր.
ԱՂԲԻԻՐ և ՏԱՐԱԶ միտարին	»	»	5 ր.


ԱՂԲԻԻՐԻ տարեկան բաժանորդագրինը	3 ր.
ՏԱՐԱԶԻ	6 ր.
ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶ պրէմիաներով և յաւելւած- ներով տարին	10 ր.
ԱՂԲԻԻՐԻ տարեկան բաժանորդագրինը արտասահմ.	5 ր.
ՏԱՐԱԶԻ	10 ր.
ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶ պրէմիաներով և յաւելւածներով	50 ֆր.
»	կամ 40 շիլինգ.

Ապառիկ եւ մառ-մառ բաժանորդագրութիւն ոչոքից և ոչ մի պայմանով չի բնդուում:
Դպրոցները, գրադարանները և հասարակական հաստատութիւնները զպրոցական աշակերտի հասցեով կամ նրանց զիջւած բաժանորդագրով
չեն կարող ստանալ ԱՂԲԻԻՐ և ՏԱՐԱԶ:

Հասցեն՝ Тифлис, Редакция жур. „АГБЮР-ТАРАЗ“. Tiflis (Caucase) Direction „ACBÜR-TARAZ“
ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶԻ տարեկան 10 ր. վճարող բաժանորդը Գրական-Գեղագիտական Սալոնը պատա մուտք ունի և կարող է ամեն օր առ. 11
ժամից գիշերուայ 7-ը օգտուել Սալոնի ընթերցարանից:
ԽՄԲԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Ծիգրան Նազարեան



Կարթագենացի կանաչ հայրենի ազատության սուր սեղանի վրայ բարձու՛մ են իրանց ամենաբանկազին իրեզլները



Բ Ա Ց Ա Ր Չ Ա Կ Ի Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

LV.

ԾՆՈՐՅԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ



Բ Է Թ Ղ Է Լ Է Մ

Թէև դեռ Բէթղէէմի Մսուրի առջ կիսալուսինն աւելի բարձր է փայլում, քան կիսաւեր դռան վերև անաստան աւերը թաշը, այնուամենայնիւ Շնորհաւոր Նոր-Տարի եւ Նոր դարազրուի:

Անցաւ արդէն մղձաւանջը...

Եւ մեր տենչանքն ու հրապարակական անկեղծ ազօթքը Աստուծուն հաճելի եղաւ լսել ու տնօրինել իր Օծեալի միջոցով:

Աշխարհին յայտնի է, որ մեր արիւնակից տաճկահայի և Հայաստանի տաճկական լծից ազատելուն միակ ապաւէնը համարել ենք հզօր Ռուսիայի Արծիւը: Անօգուտ ենք համարել մեր յեղափոխական կազմակերպութիւնների գրական գործունէութիւնը առանց Ռուսիայի աջակցութեան ու հովանաւորութեան: Սակայն և անբաւարար ենք համարել այն մշակած ծրագրնե-

րը, որ պիտի բարենորոգէին տաճկահայի վիճակը: Մենք ասել ենք՝

Թող Ռուսիան թոյլատրէ ուսանայ կամուտըներին իրանց արիւնով զնել իրանց արիւնակից տաճկահայի ազատութիւնը, իսկ ինքն էլ հզօր հովանին տալով ստեղծէ ազատ Հայաստան:

Ռուսիան մեր այդ բաղձանքը լիովին այժմս կատարեց, և այսօր երկրագնդիս բոլոր մասերից հայկական կամաւորների շարան-շարանները անընդհատ գալիս են խոտացնելու ոսական անհամար բանակը:



„LA PROTECTION“

Ռուսական հզօր Արծիւր հովանի Մասիսի Աղանուն

Գործ Տարազի Պարեզի աշխատակից անդրիագործ

Ա. ՏԷՐ-Մարտեանի:



«LA PROTECTION»

Ռուսական հզօր Արծիւր հովանի Մասիսի Աղանուն
Գործ Տարազի Պարեզի աշխատակից անդրիագործ
Ա. ՏԷՐ-Մարտեանի

Ապա մենք ասել ենք՝
Կրկնում ենք, Ռուսաստանին ներսւս է տիեզերքում սիրում հայութիւնը աւելի անկեղծ եւ սերտ, քան Բալկանի պատմները: Ռուսահայն աւելի է ջատագով Ռուսիայի մեծութեան քան մոսկովցին ու կիևցին: Բայց կայ մի բնական ազդ, որ շարունակ անհամբար է անում ուսանային. այդ Տաճկահայաստանում՝ հայկական բռնաբարտող ՆԱՄՈՒՄՆ է, արիւնակից նախրի անընդհատ նահատակելը:

Այսօր, քառք Աստուծուն այլևս ոչ մի սուս չէ կարող ձեռքը խղճին գրած չըրոտտովանել, որ այն, տիեզերքում սփռւած հայութիւնը անկեղծ և սերտօրէն ներսւս է Ռուսիային և ոչինչ չի խնայում նրա լիովին յաղթանակի համար:

Ապա ասել ենք՝
Եւ Ռուսիան գէթ այժմս պէտք է վերջապէս ըմբռնի մոմենտի բարեյաջող լինելը ու չըբաւականանայ կիսատ-պուստ բարենորոգումներով, այլ լայն ինքնավարութիւն ստեղծելով եւ ազատ Հայաստանին ազատ իշխան տալով:

Ապա վերջացրել ենք՝
Ի՞նչ, միթէ Ռուսիան կարող է նոյնիսկ կաս-

կածել, որ երբեքիցէ ազատ Հայաստանը կարող է
Բօլզարիայի նման երեքուն լինել. երբէք:

Այս բոլորը մենք ասել ենք սրանից աւելի քան 19



«LA PROTECTION»


Ռուսական հօգը Արծիւը Նովանի Մասիսի Աղանուն
Գործ Տարազի Պարիզի աշխատակից անդրեազործ
Ա. Տէր-Մարտեանի:

ամիս առաջ (Տարազ 1913 թ. № 5—6) մայիսին, երբ
երբ դեռ ձէն ու ծպտուն չըկար պատերազմի:

Իսկ թէ ինչու անհրաժեշտ է, որ Ռուսիան Տաճ-
կա-Հայաստանին տայ ազատ ինքնավարութիւն և իր
կայսերազն Մեծ Իշխաններից մէկին էլ տայ իշխան
և ոչ թէ միացնէ մեզ հետ կամ բաւականանայ բարե-
նորոգումներով, այդ մասին մի այլ անգամ: Իսկ առ
այժմս հրաւիրում ենք մեր աշխատակիցներին, ըն-
թերցողներին և Գրական-Գեղագիտական Սալօնի
մշտական անդամներին՝ արևստագէտներին, գրակա-
նագէտներին, գեղագէտներին, լրագրողներին և սրանց
ընտանիքներին մասնակցել հայկական դրօշակը պատ-
րաստելուն, որ առաջիկայ մայիսին ընծայաբերել մեր
սիրեցեալ Թագաւոր Կայսրին:

Ուրեագիծը, որ պատրաստել է Պարիզի մեր աշ-
խատակից հռչակաւոր արևստագէտ պ. Ա. Տէր-Մա-
րտեանը ու տպագրւած է Տարազի ներկայ Ռուս
պատկերացնում է Ռուսական հօգը Արծիւը Նովանի
Մասիսի Աղանուն, որ ձիթինին կտուցում բերում,
հաղորդակցում է Ռուս Արծաի հետ: Այդ երեք էսքիզ-
ներից մէկը, որը կընտրէ Գրական-Գեղագիտական
Սալօնը, այն էլ մետաքսի վրայ կը նկարել մեր հայ
բոլոր նկարիչների ձեռքով և տպա կատար կաճել:

Ս Ո Վ Ա Ծ Ե Ն Ք Դ Ա Դ Ր Ա Ծ



Ա Տ Ր Պ Ե Տ

Յուրա էր, սոսկալի կեր-
պով փչում էր քամին, սուրում
վար իջնում Եալաուդ-Չամի:
Պայծառ արև օր էր, երկինքը
ջինջ, ոչ մի կտոր ամպ չէր
ծածկում ամբողջ կամարը և
արեղակի ճառագայթները ծի-
ծաղում էին ձիւնի քուլաների
վրայ և բոցավառ աստղերի
նման նորանոր անդրադարձ
ցոլքեր բարձրանում ու խըտ-
տեցնում էին ճամփորդի աչ-
քը կուրացնելու աստիճան:

Գնում էին բանակի խճուղով Առնթերի ձորով
դէպի Մէրզէնէի մի քուրդ կին, իր աղջկան և գրկած
տղի հետ: Գնում էին երկուսն էլ դողալով, երկուսն
էլ սրսփալով, ուղում էին լաց լինել, չէին կարողա-
նում, տենջում էին նստել հանգչել. ձիւնը այնպէս էր
սաւանի նման պատել երկրի երեսը, որ բաց տեղ չը-
կար նստելու, տքնում էին առաջ գնալ, իսկ ծնկնե-
րի և մկանների մէջ ուժ չէր մնացել...

Բայց և այնպէս, թէև կրիայի քայլերով, սակայն
անվերջ գնում էին: Գիշերւան խաւարի սպառնալիքը,
ցրտի սարսափը, սոված գայլերի և գաղանների ար-
տախրքը ստիպում էր թշուա ընտանիքի մնացորդին
առաջ, դէպի առաջ գնալու, գնալու մի ապաստան
գտնելու, մի որջ ձեռք բերելու, որպէսզի կարողանան
պատասպարել: Բայց երկար էր ճանապարհը: Վերջը

չէր հասնում, դաժան էր քամին, չէր դադարում, սըր-
սփացնող էր ցուրտը, արևը չէր կարողանում կոտրել
սառնութեան ոյժը:

—Նանէ, սոված եմ, արևիդ սիրուն փշուր մը
հաց տուր:

—Լաթ, համբերիր, քիչ մնաց, ահա եկանք հա-
սանք կոճոր, մեղ հաց էլ կըտան, թոնիր էլ կըկա-
խենք մեր ոտքեր ու կը տաքանանք:

—Նանէ ջան, վայ նանէ ջան, ես մեռայ, էլ չեմ
կարայ գալ:

—Բալա ջան, գնան, գնան, թէ չէ թուրքի աս-
կեարն եկաւ, քեզ կը խշրէ, գնան, ասկեարն եկաւ:

«Թուրքի ասկեարի» անունը սարսափեցրեց թըշ-
ուա աղջկան, որը հագիւ եօթը տարւան լինէր և նա
առանց հտ դառնալու, մօրն առաջն անցած, մօրը մար-
մընի շքի մէջ ծածկւած, մօրը ծնկներից հպած և նրա
դրդումներով էր առաջ գնում, շարժում, մեքենական
շարժումներով:

Եւ մայր ու աղջիկ առաջ էին գնում. առաջ էին
շարժում մեքենական ընադդով, գնում էին դողա-
լով, ցնցոտիների մէջ փաթաթւած և քողովների մէջ
ծածկւած. թշուա աղջիկը մոռանալով մօր ասածները,
ամեն հինգ րոպէն մի անգամ ասում էր. —Նանէ, սո-
ված եմ, նանէ ջան դադրած եմ, մի պատառ հաց.
Իսկ մայրը նրան ահաբեկում էր թուրքի ասկեարի
սարսափով և ստիպում առաջ շարժելու:

Սակայն միայն աղջիկը չէր սոված, սոված էր և
ինքը Նանան, որ նախընթաց օրւանից ոչինչ չէր կե-
րիլ: Քաղցած էր և փսփրիկը՝ տղան, որին ցուրտը

աստիճանաբար աւելի ու աւելի էր սեղմում մօր կըրծ-
քին: Եւ թշուառները գնում էին, գնում էին առաջ:

Վերջապէս երևեցաւ Կօձորը և այդ երևոյթը այն-
քան քաջալերեց մօրն ու աղջկան, որ նրանք
ոգևորւած, թե առած գնացին հասան գիւղ և փոքրիկ
աղջիկը առաջին անգամ պատահած Բանակեցի թուր-
քին ձեռը մեկնեց և լալագին ձայնով ասաց.

— Աղա ջան, սոված ենք, դադրած, ոգորմութիւն
արա, Ալլահի սիրուն, մի պատառ հաց տուր:

Թուրքը մոլորւած էր. երեխան խօսում էր քըր-
դերէն և պահանջում էր քրդերէն աղերսանքով ու ող-
բով. բայց տարազը քրդական չէր: Ենչգիղական էր:
Թուրքը չը գիտէր, թէ ինչ ասի, ինչպէս իմանայ թէ
մուրացկանը թուրք էր, թէ գեալուր—անօրէն: Նա
մտածեց, ծրագրեց և ասաց:

— Ո՞րտեղից էք գալիս:

— Հոքամից, ասաց մայրը, աղերսալի պատկեր
ընդունելով, Ալլահի սիրուն, օգնիր, երեխաներս քաղ-
ցից ու ցրտից մեռնում են:

— Հոքամ, դու ո՞ւր կ'իսնես, ասաց թուրքը:

— Ես Ալօ-բէգի հովւի, Բասօի կ'իսնես եմ...

— Ի՞նչ ենչգիղի ես, ո՞չ թէ միւսլիման... Ձե՞ս ի-
մանում, որ Ձե՞ս է և քեաֆիրները (անօրէնները)
պիտի շարգւիրն:

— Աղան, մենք էլ միւսլիման ենք, ինչի չես գի-
տեր, որ Ալօ-բէգը քրիւս եղաւ, իմ այս տղիս թլփա-
տեց հեռու:

— Որ այդպէս է, գնան, գնան, տո՛ւն, ներս մտէք,
Աննան, այս օտարականներին հաց տուր, ուտին, տեղ
տուր տաքնան, ասաց թուրքը կասկածանքով ոտքից
մինչև գլուխ գննելով ցրտահար թշուառներին: Երբ
փախստականները տաքացան ու կշտացան, ներս մտաւ
թուրքը իր դրացու հետ:

— Բասօն ձրտեղ է, նա հարցրեց թշուառ կնոջից,
դուք ինչի փախաք առանց Բասօյի:

— Ուռուսի ու թուրքի ասկեարն իրար առան, Բա-
սօն վաղ էր փախել տանից Ալօ-բէգի հետ: Մերոնք
չը գիմացան, թողին փախան: Ես էլ երեսէքս առի ու
փախայ:

— Ուռուսն ո՞ւր ա հիմա: Ի՞նչի էր եկել Հօքամ...

— Ես ի՞նչ գիտեմ, ինձ ասին, թէ ուռուսն եկաւ,
Հօքամն առաւ, փախիր, ես էլ փախայ:

— Սուտ է ասում, ասաց դրացին հիւրընկալին:
Ուռուսն ինչպէս գնաց հասաւ Հօքամ, որ մենք չիմա-
ցանք և սա մենակ փախաւ: Հապա դրացիներն ո՞ւր են:

— Հիմի ուր որ է կը գան, ասաց Նանան, ար-
տասուքները սրբելով, նրանք էլ կը հասնեն:

Բայց մի երկու ժամից յետոյ էլ գալով չեղաւ
Կասկածանքը սաստկացաւ: Հիւրընկալը գնում-գա-
լիս, յուսադրում էր, բայց բորբոքւած հեռանում էր,
երբ հետևորդները չէին գալիս:

— Կնիկ, ասաց յուզւած հիւրընկալը, արևը մայր
մտաւ, գալով չըկայ: Եթէ մինչև մութը կոխելը մարդ
չըգայ, քեզ որպէս խաբեբայի պիտի կտրտեմ, որ-
պէս լրտեսի, մի փշրտեմ: Ասան, ի՞նչ բան է, ուր են
միւս փախչողները:

— Ես ի՞նչ գիտեմ, ասաց Նանան, թոնրի միջից
առանց դուրս քաշելու վար կախած ոտքերը:

Երբ ճրագները վառած սպասում էին Հոքամի
փախստականներին, ամբոխային աղմուկ մօտեցաւ
գիւղին: Հիւրընկալին մի քանի դրացիներով ընդա-
ռաջ գնացին և փոխանակ Հոքամիցիներ, նրանց զի-
մաւորեցին թուրքական զօրքերը, որոնք կողակներից
հալածւած եկան թափեցան բանակ:

Հիւրընկալը
մոռացած Նանա-
յին ու նրա
երեխաներին իս-
կոյն ներս կան-
չեց ցրւած թուրք
զօրքերին, որ-
պէս զի պատրս-
պարէ: Երբ
թուրքերին տե-
սաւ, այնպէս մօ-
րը գրկին փա-
թաթեց որդին,
այնպէս նրա սը-
րունքները գըր-
կեց աղջիկը, որ
թշուառ մայրը
զգալով զաւակ-
ների սարսափը
թողեց տունը և
խաւար գիշերին
ճանապարհ ըն-
կաւ դէպի Մէր-
դէնէք:



Գիշեր էր,
լուռ, մութ,
ցուրտ և սոսկա-
լի գիշեր: Գնում
էին, փախչում
էին մայր ու զաւակներ, որ ազատին թուրքերից,
հեռանան ասկեարից:

Բայց նրանց երևնալը խիստ վատ տպաւորու-
թիւն էր թողել թուրք ասկեարներից մէկի վրայ: Նա
առաջին երևոյթից յետոյ, երբ նրանց կորցրել էր, իս-
կոյն մօտեցաւ հիւրընկալին և ասաց.

— Ո՞ւր են այն ենչգիղիները, ի՞նչի առաջ չեն
գալիս, ո՞ւր կ'որան:

Տուն, դուռ, գիւղ ամեն կողմ որոնեցին, չըկային
ու չկային: Այս աներևոյթանալը աւելի սաստկացրեց
վատ ազգւած զօրքի տխուր տրամադրութիւնը և ասաց.

— Այդ սատանայապաշտներն ո՞ւր գնացին:

— Նրանք մեզ կործանեցին Հոքամում, նրանք
մեզ կըկործանեն և Բանակում: Փախչենք, անշուշտ
նրանք սատանի դաւակ են գնացին ուռուսին խաբար
հասցնեն:

Եւ դուրս եկան գիւղից, առաջ ընկան փախչե-
լու, բայց փոխանակ Նանային ու աղջկաներին գտնե-
լու, նրանց զիմաւորեցին կողակները և այդտեղ էլ
նրանց փշրեցին ու թափեցին մէջ գիշերին:

Բայց այս պարագան սաստկացրեց հիւրընկալի
կասկածները, որը գաղտագողի ճանապարհ ընկաւ ո-
րոնելու կասկածելի սատանայապաշտներին: Եւ նա
լուսադէմին դտաւ նրանց այն պահին, երբ մայրը
փաթաթւած աղջկան կանչում էր.

— Վայ, քաբախ դառնար Ալօ բէգի տունը, որ
Բասօն այնտեղ չօրան չըմտնէր, լուս հաւատին ա-
րևին, երկնքին չըղաւճանէր և իմ տղոց խաւարի
պատուհասին չարժանացնէր:

— Աղան, քաղցած ենք, աղաչեց աղջիկը, տեսնե-
լով հիւրընկալին:

— Ու դուն խափում ես, թէ իսլամ ես և թլփատ-
ւած է քու որդին: Ուրեմն դեռ քու հոգումն է, ասաց
կատաղած թուրքը քու Եազգանն ու արեգակը և եկար
ճանապարհ ցոյց տւիլ Ուռուսներին:

— Աղան, քաղցած ենք, յոգնած ենք:

— Սատկեցէք, ասաց հիւրընկալը, վրայ հասաւ,
որ պատաստէր թոյլ մօրն ու անմեղ զաւակներին, յան-
կարձ կողակի սուրը թոցրեց պետութեան դաւաճանած
թուրքի գլուխը, որը գրկեց ենչգիղի կնոջ զաւակնե-
րին, նստեց ձին տարաւ մօր հետ և ընտանիքն ա-
զատեց սառցից ու քաղցից:



Լ Ի Կ Ա

Ն Ո Ր Տ Ա Ր Ի Ա Յ Զ Ր Ո Յ Ց

(Լուսերէնից)

Այդ երեկոյ Նիկոլայը սովորականից աւելի տը-
խուր էր:

Երբէք նրան այնպէս խիստ զգալի չէր եղել նը-
րան հասած զժբաղդութեան դասնութիւնը, այն վիշտը,
որ պատճառել էր նրան այնպէս ջերմ սիրած կինը,
ձգելով նրան:

Ուզիդ մի տարի զրանից առաջ, մի այգալիսի և-
բեկոյ նոր տարու նախընթաց օրը, երբ նա, չի փոխա-
դարձ սիրոյ բաղդաւորութեամբ, շտապում էր նրա,
սիրելի Լիկայի մօտ, որպէս զի կէս զիշերին միասին
զիմաւորէին նոր տարուն, նա կրկնէ մի ծանր հարւած:

Ինչպէս հէնց այժմ նա յիշումէ բոլորը, բոլորը
ինչ որ կատարուեց այդ երեկոյ, զրկելով նրան այն
ամենից, ինչ որ ամենաթանկագինն էր նրա համար:

Իր գնած իրերով ծանրաբեռնուած, ուրախ ուրախ
Նիկոլայը սեղմեց ծանօթ զրան զանդը: Նա յիշում է,
թէ ինչպիսի բաւականութեամբ նա ահանջ էր գնում
սանդուխներից հասնող շտապ քայլերին, ինչպէս
պատկերացնում էր իր մտքում Լիկայի գեղեցիկ փոք-
րիկ դէմքը: Ահա իսկոյն կը բանայ նա զոնները, կը
փարի նրա կրծքին...

—Սիրելիս—կասէ նա,—ահա դու եկար, մենք միա-
սին կը զիմաւորենք նոր տարուն, մեր նոր բաղդաւո-
րութիւնը...

Եւ յիշումէ նա աղախնի յուզած զէմքը, որը
Լիկայի փոխարէն բացել էր նրան դուռը և մի տեսակ
խիստ շտապով նրա բուն էր զրկել մի առմասկ:

Տոմսակում միքանի կարճ խոսքերով Լիկան խըն-
դրում էր Նիկոլային ներել իրան այն վշտի համար,
որ նա պատճառում էր նրան. նա երկար կուել էր
ինքն իր գէմ,—նա սիրել է ուրիշին և գնում է նրա
հետ... Թող Նիկոլայը մոռանայ այն վատ, այն ան-
պէտք ազջկան,— թող նա հասկանայ որ Լիկան ան-
արժան է այնպիսի լաւ, այնպիսի պաշտելի մարդուն,
սրպիսին նա է... Եւ թող նա չը որոնէ նրան, եթէ
չէ ուզում խորտակել նրա բաղաը...

Նիկոլայը միքանի անգամ կարգաց այն անողորմ,
շտապ զրւած սողերը և սարսափը տիրեց նրա ողջ
էութեան...

Չըկար ոչ արտասուք, ոչ հեծեմանք, կար մի-
այն մեծ, անսահման վիշտ, որը նրանից անբաժան
եղաւ ամբողջ տարին: Նա կաշկանդեց նրա հոգին,
զրկեց զործելու ընդունակութիւնից. նա չէր մոռաց-
ւում ոչ ցերեկը և ոչ զիշերը: Նիկոլայը չէր կարողա-
նում մոռանալ Լիկային և ահամայ որոնում էր նրան
ամեն տեղ: Թատրոնում հանդիսատեսների խմբի մէջ,
թէ զբոսալայրերում:

—Նա հետաքրքրութեամբ նայում էր կանանց զէմքե-



րին, նա առաջ էր վազում, որպէս զի տեսնէր այն կնոջ երեսը, որի գեղեցիկ կազմածքը թէկուզ հետաւոր կերպով յիշեցնում էր Լիկային: Նա այցելումէր համերգները, կաֆէշանտանները, կինեմատոգրաֆները—միշտ միեւնոյն նպատակով—գտնել Լիկային, իր միակ, սիրելի Լիկային: Նա չէր ուզում խանգարել նրա բաղդաւորութիւնը,—օ, ոչ... Բայց եթէ նա կը պատահէր նրան, նա կը բռնէր նրա սիրելի, քնքոյշ ձեռքը, նա կը նայէր նրա աչքերին:

— Լիկա, — կը հարցնէր նա նրան, — դու բաղդաւոր ես, դու սիրում ես...

Եւ յետոյ, եթէ նրա աչքերում կը կարգար զրական պատասխան, նա հանդարտ կը հեռանար նրանից—հանդիստ և հաշուած իր վիճակի հետ...

Սակայն իզուր: Անցնում էին օրեր, ամիսներ և նա չէր պատահում նրան: Յաճախ, անքուն գիշերից յետոյ, վշտահար, բայց միշտ նոր յուսով, Նիկոլայը շնչում էր ինքն իրան. «ա՜հա, այսօր... գուցէ, ես կը պատահեմ նրան»: Սակայն անցնում էր այդ օրը ևս և գալիս էր աւելի անքուն, տանջալից—հրկար գիշեր:

Եւ ա՜հա այդ երեկոյ, Նոր Տարու նախօրեակին, նա հրկար թափառում էր փողոցներով, միայնակ, արտում, ինչպէս հին տարին:

Արդէն սկսել էր մթնել, երբ կինեմատոգրաֆների պայծառ ճրագները վառուցին բանուկ փողոցների հրկարութեամբ:

Համարեա առանց մտածելու մտաւ Նիկոլայը նրանցից մէկը և զնաց գիտելու գահլիճը: Քիչ հասարակութիւն կար. այդ երեկոյ ամենքն էլ աշխատում էին դիմաւորել տօնը իրանց մերձաւորների շրջանում:

Սկսեց սէսնաւը: Վարագոյրի վրայ երևաց մի ինչ որ դրամայի մեծագործը վերնադիրը:

Նիկոլայը նայեց և նրան թւաց թէ ինքը զանանցում է: Նա տեսաւ, որ գլխաւոր գերը կատարող գերասանուհին իր Լիկան էր: Նա չը բացահայտեց—միայն նրա սիրտը բարախեց անհանգիստ և արագ: Սկզբում նա ուզեցաւ հաւատացնել ինքն իրան, թէ սխալուում է,— թէ այդ գերասանուհին միայն խիստնման է Լիկային: Սակայն տեսարանը փոխւում է ինչպէս միւսի ետևից և Նիկոլայը միշտ աւելի ու աւելի համոզւում էր, որ տեսողութիւնը չէր խաբում նրան. դա— Լիկան էր, նրա քայիւրը, նրա շարժւածքը, թէ ինչպէս նրա յետ էր ձգում ճակատից մազերի փունջը, վերջապէս դա նրա հայեացքն էր: Սակայն որչափ նա նիհարել էր և ինչպէս տխուր էին նայում նրա մեծ աչքերը...

— Լիկա, սիրելիս, — շնչում էր Նիկոլայը, — մի՞թէ ես գտնայ քեզ...

Եւ յուզմունքից օրօրելով, նա վազեց թատրօնի կառավարչի մօտ:

— Լսիր, — շնչասպառ շնչացնաւ, — իսէ՛ր Աստուծոյ... Ես ճանաչեցի ինձ մօտիկ մի կնոջ յանձին հէնց այս էկրանի վրայ եղած գերասանուհու... Ասացէ՛ք, ինչպէս իմանամ ես, թէ որտեղ է նա:

Նրա անկապ խօսքերից կառավարիչը կնիադրեց, թէ Նիկոլայը մտաւորապէս անրնական գրութեան մէջ է, սակայն երբ նայեց նրա գունատ դէմքին, նրա աչքերին, նա հասկացաւ, որ այդտեղ, այդ կիսախաւար գահլիճում, աննկատելի կերպով կատարել է կեանքի ողբերգութիւններից մէկը:

— Հանգստացէ՛ք, — կարեկցարար ասաց նա Նիկոլային, — դուք կը գտնէք այդ գերասանուհուն, ես երաշխաւորում եմ: Ահա այն գործարանի հասցէն, որը հանել է նկարը, այնտեղ դուք կըստանաք հարկաւոր տեղեկութիւնները և շնորհակալ եղէք Աստուծոյ, — աւելացրեց նա, — որ այդ նկարը ուսաց գործարանից է, եթէ ոչ դուք զժւար թէ հետքը գտնէիք...

Մնացած բոլորն անցաւ ինչպէս մի տենդային երազ: Նիկոլայը միայն յիշում է, թէ ինչպէս արդէն երեկոյեան ութ ժամին նա գտաւ գործարանի կառավարչին նրա բնակարանում, ինչպէս նա, կարեկցելով նրան, որոնեց գտաւ այն գերասանուհու հասցէն, որը յիրաւի Լիկա Նադրոգսկայան էր (նա ապրում էր ուր որ Մոսկուայի մի արւարձանում), — թէ ինչպէս արդէն կէս գիշերին մօտ Նիկոլայը գտաւ քաղաքից դուրս զտնւած անմարդարնակ փողոցի մի բակում նրա փոքրիկ տնակը:

Սրտատրոփ նա անցաւ մութ սրահների մօտով և բաղնից նրա դուռը...

— Ներս եկէ՛ք, — լսեց քաղցր, ծանօթ ձայնը:

Եւ հրճանքի ուրախ բացահանչութեամբ, Նիկոլայը հրեց զոները և իր գրկին սեղմեց յաւերժ սիրած Լիկայի չքնաղ դէմքը:

Ուրախութեան արցունքներով Լիկան պատմեց, թէ ինչպէս անցկացրեց նա այդ տարին վշտահար և յուսախար. թէ ինչպէս հիասթափուեց նա նրանից, որի համար նա ձգել էր Նիկոլային, թէ ինչպէս հեռացել էր այն անպիտանից, բայց չէր համարձակել, վախեցել էր վերադառնալ Նիկոլայի մօտ. թէ ինչպէս քաղցած էր եղել և աղքատ, մինչև որ ընդունւել էր գերասանուհի կինեմատոգրաֆի գործարանում:

Նիկոլայը հազիւ էր լսում նրան:

— Իմ, նորից իմ Լիկա, — շնչում էր նա շոյելով նրա մազերը և համբոյրներով ծածկելով նրա նիհարած դէմքը:

Ամեն ինչ ներւած էր ու մոռացւած: Չբացան վշտի և կարիքի ուրախանները, — սիրոյ հուժկու ձայնը խլացրեց Նիկոլայի սրտում խանդի բոլոր շոյելները: Եւ երբ հարեան սենեակում հին ժամացոյցը խալոտ ձայնով խփեց տասներկուսը, — առանց շամպայնի բաժակների, առանց նազաճութեան, առանց կենացների և ճառերի երկու բաղդաւոր սրտեր խաբխուլ տնակի փոքրիկ սենեակում դիմաւորում էին Նոր Տարուն, որը բերում էր նրանց նոր, յախտնական քաղաւորութիւն:

Լ. Մարկոսեան

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՐԲԵՄՆ ՕՐԻՈՐԻ ՅՈՒՍԻԿԵԱՆԻՆ



Պրոֆեսոր Յակոբեան
Հիմնադիր Անգլո-Հայկ. Ընկ.

զիսյում կոնգրեսիստներն ցոյց տւած յարգանքներն, խնճոյքներն, էքսկուրսիաներն նկարագրութիւնը պատեհ օրերին, աւելորդ չեմ համարում գէթ երկու բառ գրել Մարլօ-ում (Շէքսպիր) Բալտիկեան ցուցահանդիսի մասին: Այս ցուցահանդիսին բացառապէս մասնակցում էին՝ Ռուսիան, Գերմանիան, Դանիան, Շէքսպիրն և Նորեգիան: Կոպէնհագէնից կոնգրեսիստներն յատուկ շոգինաւով, որի մէջ կայացաւ փայլուն ճաշկերոյթ etc., տարան Մարլօ: Հէնց այնտեղ ուր օրերս կայացաւ երեք թագաւորներն համախորհուրդը պատերազմին վերաբերեալ:

Բալտիկեան այս ցուցահանդիսին Ռուսիան ի միջի այլոց ցոյց էր դրել Բագլայ նաւթը: Յատուկ վիարին ունէր Նորէլ եղբ. Ընկ. որոնց ներկայացուցիչ շէյ, ինժեներ պ. Georg Carlstedt ամեն ջանք գործադրել էր, ոչ միայն նշանակալից անելու այդ ուշագրաւ արդիւնաբերութիւնը կովկասի, այլ և հոգացել էր, իբրև ոսական մասի փոխ-կոմիսար, շեշտել և ուսական այլ արդիւնաբերութիւնները: Սակայն փաստը հրապարակի վերայ էր. կովկասի այդ անհուն հարստութիւնը չունի ոչ միայն կովկասեցի, այլ նոյն իսկ ռուս և ոչ մի ներկայացուցիչ: Շեյը Նորէլն է, որ ստեղծել է Բագլոն, հայերը զիջանել են իրանց ունեցածը օտար ֆիրմաների և այսօր դրսումն էլ շէյն է պարծնում այդ նաւթից հարիւր տեսակ ձէթեր քաշելովը: Ճիշտ է պ. Carlstedt խօսում է ոսերէն ու ամեն հնար գործ էր դնում համոզելու Ռուսիայի առաւելութիւնները, բայց երբ ոսական բաժանմունքից դուրս էիք գալիս ու մտնում գերմանականը, այլ տպաւորութիւն էիք ստանում: Գերմանիան բերել էր ի ցոյց հարիւր տեսակ մեքենաներ և ի միջի այլոց շատ տասնեակ, մէկը միւսից բոլորովին տարբեր, երկաթուղու գնացքներ: Օտարիներն տեսակները թիւ ու համար չունէին:

Սկանդինաւիայից ես անցայ Հոլանդիայ և այն-

հօպէնհագէնը, որ այսօր կենտրոն է դարձել համաշխարհային մամուլի թղթակիցների համար և որտեղից, իբրև չէզոք պետութիւնից, աշխարհին սփռում է տեղեկութիւններ պատերազմի բնմերից, այս անցած ամառ համաշխարհային մամուլի XVI-րդ կոնգրէսի ժողովատեղին էր: Թողնելով ապագային այս կոնգրէսի և ամբողջ Դանմարքում, Շէյցիայում ու Նորե-

տեղից Անգլիայ: Յունիս ամսի վերջերին էր: Լոնդոնում այդ օրերը հայութիւնը ի պատիւ Mrs. և Mr. Noel Buxton-ի մի բանկէտ էր տալիս: Հանդէսը կայացաւ Hotel Cecil-ում: Ներկայ էին մօտ հարիւր հոգի, որոնց մէջ Անգլիայի ազնւատոհմ, Գլադստօնի պաշտօնակից George William E. Russell, որի նախագահութեամբ և կայացաւ բանկէտը, սրբազան John Bishop of Hereford եպիսկոպոսը, Գերակոմս Mr. James Bryce և նման անգլիական նշանաւոր դէմքեր, Հայ դաղթականութիւնները իրանց ընտանիքներով և Լոնդոնի նշանաւոր թերթերի՝ Times, Standard, Daily Telegraph, Morning Post և Press Association-ի ներկայացուցիչները, որոնց անւանացուցակի մէջ տպագրւած էր և Աղբիւր և Տարազի խմբագիր Տ. Նազարեանի ներկայութիւնը, որի ճառով և փակեց հանդէսը: Ահա այս բանկէտին խօսեցին թէ եղբայրք Buxton-ները, թէ Ջէմս Պրայս, թէ սրբազան Յովհաննէս եպիսկոպոսը և թէ պ. պ. Արամ Բաֆֆի, պրոֆեսոր Յակոբեան և Տիգրան Նազարեան:

Պրոֆեսոր Յակոբեան, որ հիմնադիրն է Անգլո-Հայկական Ընկ. և որ ամենաւազազոյն հրապարակախօսն է, որ հայկական դատը անգլիական նշանաւոր թերթերում արծարծել է ու Times-ի հինաւուրց խմբագիրներից մէկն է, իր պերճ ու հոյակապ ճառը աւարտեց Գլադստօնի St. James Hall-ում 1876 թ. դեկտ. 8-ին արտասանածը կարդալով՝

«Այլանդակ գաղափարների են տեղ տալիս զանազան շրջաններում, թէ երբ հայ նահանգները ճաճկական անգութ և մաշող լուծից ազատեն, ուրիշ լուծի տակ են մտնելու: Իսկ ես կարծում եմ և յայտնում, որ նրանք որևէ լծի տակ բնաւ չը պիտի մնան: Ընդհակառակ, Աստուած իր ողորմածութեամբ այս նահանգները ստեղծել է, որպէսզի ժողովուրդը անկաշկանդ բնակի և առաջանայ իր ազատութիւնով»:

Mr. Symonds իր ճառն էլ նոյնպէս աւարտեց ասելով՝



Նօք գլխանի վիշապին գնդակահար են անում Սերբ. Բելգիկ-Ռուս-Ֆրանս-Անգլիան.



Ֆրանսիական օդանաւը Բելգիայի սահմանի վրայ

«Գլադստօնի, հոգին աւանդելուց առաջ, վերջին արտասանած բառը Հայաստանն է եղել: Անշուշտ նա պատգամ ու աւանդ է թողել անպիտաններին, որ շարունակենք հայկական դատը, մինչև որ իրաւունքը հաստատուի ու արդարութիւնը յաղթանակէ:»

օրերս կօպէնհագէնում վերջացնելով իր միտիան, ոչ թէ ուղղակի վերադառնում է իր հայրենիքը՝ Կովկաս, այլ դեռ գնում է մեծ Շէքսպրի յաւիտենական. օթեւանը Stratford տանելով Marienlyst-ից Համլէթի պարկից վարդեր նրան, որն իր գրչով անմահացրեց թա-



Հ Ո Ւ Ս Ն Ն Ր Ս Տ Ի Ս Փ Ե Ր Ո Ւ Մ

9. Տիգրան նազարեան պրօֆեսօր Յակոբեանից յետոյ արտասանեց հետեւեալը՝
«Ողջունելով Mrs և Mr. Բաքըստըններին ոչ միայն իբրև մի պատահական անցորդ, այլև իբրև միակ հայ ներկայացուցիչ միջազգային Մամուլի կօնգրէսի, որ

խիծ-Համլէտին:
Իսկ Mr. Buxton Ձեր ազնիւ գրչի նիւթ դարձրիք ոչ թէ չքնաղ դանմարբի գուքս, տարակուսանքներում խորասուզած մի թախիծ-անհատ, այլ թշւառ և մարտիրոս մի աշխարհ՝ իմ հայրենիք Հայաստանը:

Թոյլ տւէք, ուստի կրկնել Ձեզ այն ինչ զեռ հինգ տարի սրանից առաջ այստեղ, տիեզերք Լոնդոնում կայացած միջազգային Մամուլի կօնֆերանսից յետոյ երբ ուխտի գնացինք Շէքսպիրն, ես այնտեղ իմ ուղերձի մէջ զեկուցանեցի ասելով որ՝ հայը արեւան ատուների, կոյս աղջիկների և հարսերի դիակներից բլուրներ թշուառ Հայաստանում Յիսուսի Աւետարանի հետ անվհատ կարգում է և մեծ Շէքսպիր հոյակապ գրեւածքները: Եւ թէ Արեւելքում Մարտիրոս հայը շատ-շատ դարեր ամենազարհուրելի տանջանք կրելով, անբիծ ու անարատ է պահել մինչև օրս էլ այն սուրբ դրօշակը, որի վրայ անջնջիլի ծածանում են՝ Լոյս, ՈՂմարտութիւն, Քաղաքակրթութիւն:

Եւ յանուն համամարդկային քաղաքակրթութեան, լոյս-ճշմարտութեան և մարդասիրութեան, որև նշանաբանն է մեծ ու ազատ Անգլիայի, կոչ եմ անում

հզօր Անգլիայի պայծառ զաւակները մեզ հայերիս ճանաչել Արեւելքում ձեզ դաշնակիցք:

Անգլիայից ես անցայ Բելգիայ և մնացի Բրիւսէլում մինչև յուլիսի 13-ը, դեռ պատերազմի ամենահեռաւոր պերսպեկտիւն անգամ չը կար հրապարակի վրայ: Այդ օրերը Վիլհէլմի կառավարութիւնը ամենահրատապ բանակցութիւններն է եղել անելիս Բելգիայի հետ: Սակայն հէնց այդ օրերին փաստօրէն Գերմանիան արդէն լարած է եղել իր բոլոր ցանցերը Բելգիայում, մանաւանդ նրա երկաթուղիներում: Եւ ինձ է եղել վիճակաւ գերմանական առաջին դոհը լինել. թէ ինչպէս այդ կը զրեմ մանրամասն հետեւաւ անգամ:

Րադամէս



Հ Ո Ւ Ա Ն Դ Ա Կ Ա Ն Կ Ա Տ Ի Ն Ի Ս Ի Ն Ե Ր

ՅԻՇՈՒՄ ԵՍ ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԱՌԱՋ

(Արձակ բանաստեղծութիւն)

Յիշում ես 25 տարի առաջ...

Միթէ այն մի երազ էր, մի գիւթական երազ տարեմուտի գիշերին, որը երբէք այլևս չի կրկնելու:

Արծաթ լուսինն էր լուսաւորում մեզ երկնակամարի բարձրութիւնից, ծովի ալիքներն էին սիրոյ քաղցրիկ երգ մրմնջում մեր ականջներին, երբ մենք նստած միասին ծովափին, մարդկային ժխտրից հեռու, մենաւոր նստարանի վրայ գալիք նոր տարուն էինք սպասում:

Երջանիկ երեկոյ էր այն:

Մենաւոր նստարանի վրայ նստած միայնակ, մենք երջանիկ բոպէների ազգեցութեան տակ, անմոռաց օրերի յիշատակն էինք վերյիշում և սպազայի չքնաղ ծրագիրներ կազմում:

Յիշում ես այդ...

Քաղաքային հսկայական ժամացոյցի զանգը դողանջեց և նիրհող քաղաքի լուսթեան մէջ տարածեցին, կորան նրա տասներկու զարկերը:

Եւ դու փաթաթելով իմ վզին, շրթունքներդ շրթունքներիս հպելով ամուր, կիսաձայն դողող ձայնով ասացիր:

— Շնորհաւոր նոր տարի, սիրելիս, մեր մատաղ սիրոյ առաջին նոր Տարին:

Յիշում ես այդ...

Սանդալառ սիրոյ գուրգուրանքները մեզ մոռացնել էին տեղ ամեն ինչ: Ժամանակ ու տարածութիւն զոյութիւն չունէր մեզ համար. մենք ապրում էինք մեր սիրով... Մենք ապրում էինք միմեանց համար...

Ու ուշ գիշերին, երբ մենք բաժանուում էինք միմեանցից, դու ասացիր:

— Տարեմուտի այս չքնաղ գիշերը ես չեմ մոռանալ երբէք:

Ասացիր ու գնացիր:

Յիշում ես այդ...

Քսանհինգ տարի է անցել այդ օրւանից և ահա կրկին տարեմուտի գիշերն է...

Բայց ես միայնակ եմ, միայնակ ու առանց քեզ: Սև խոհերը սիրտս լի, ես միայնակ նստած ծովափին, մեր նստարանի վրայ, անցեալ օրերի երջանիկ ժամերն եմ վերյիշում և քեզ եմ յիշում և քեզ եմ անգինս...

Իսկ դ՞ու:

Օ՛, որտեղ ես դու, ձայն տուր, ասա ինձ:

Յիշում ես քսանհինգ տարի առաջ, այս նոյն երեկոն...

Թէ այն մի երազ էր, մի չքնաղ երազ տարեմուտի գիշերին, որը երբէք, երբէք այլևս չի կրկնելու...

Վաղարշակ Թումանեան

մենք ա էջ-
միածին (ծա-
ռայրմ ընդրա
սուրբ զօրու-
թիւնին) վան-
քին վէջ մին
պէնին ձեռք
չի տամ հերիք
չի, հեալա
տաճարին մէ-
ջին մին կան-
թիղ էլ ա կախ
տամ, վէրճրա-
քը միշտ վառ
մնա, չրու սօր
էլ էտ կան-
թիղը Շահա-
բասի կանթիղ
ա ասվում:

Ղորթ ամին
մին թաքա-
ւէրնէ ընտիւս
հկալ, վէր իւ-
րանց փառքին մհար կը-
կիր աշխարհ վննատակ
ըն տալ, շհարնէ
փչըցրալ, ձեռք ընկած
եսիրներին ծովըմ հա
զետըմ խեղդալ, հա չէ
ժամերըմ կրակ տալ հա
ձիանց վննըտակի Չար-
դալ, ամմա էն գուլումը
չի իլալ հինչ վէր անըմը
կտրուած թոփ ու թւան-
գը, գիւլա բարութը ար-
շա ընգնելան հտը:

Քեօհնա դովրերին ա-
մէսներաւ, տարիներաւ
մին մինու նհետ կոէվ
կտին, շատ շատ հազար,
հէնդ հազար հա առէ
շատը տասսը, քսան հա-
զար մարթ կըկըտորվար,
ամմա մհէգուան դոշու-
լըղըմը օրեկան իծծուն,
հգերահեւել մարթուկեանք
խւարվում ու ամէն կոէվ
քանէ քանէ միլիոնմարթ-
կանց արիւնաւ չոլերն ու
սարերը ուղղում: Ամմա
տու եկ Ասծու պէնին
եշի, վէր էտ արիւն ա-
նողնէն, էտ մարթա-
սպաննէն, էտ երկիր աշ-
խարհ գուլումի հասցնողնէն,
իւրանց սիրած բալին
հա կեանքի հնգերին աչքը
ճնապարհին թուղողնէն,
էն աւալքի բուի, խեղքը
զբանին, ուսում գիտութիւնա
զուրկ շափաւուլչի ազգիը
չըն, այլ ուսումն ու գի-
տութիւնը քթընհրուն ու
բողազներուն շըռըռըմ,
անըմը ցեվիլիովաննի
տիրած լեման ու աւստրիացի
էտ թոփ ու գիւլա բարութ
հնարողնէն, մարթա-
սպաններին ուստարաշիքը,
վէր ցմաք, ա ճոկ ջրին



Գրիգոր Գեւորտիմեան Թուճմանեան
Վերաւորած Աւստրիական սահմանի
վրայ, բժշկած և օրերս նորից վերա-
դարձած ժիրարդ ուղմի գաշտը: Պարգե-
ւատուած ս. Գէորգ ասպետական խաչով:



Ռօզդան Գաւրեան Աւան-Եւզբաշեան Սեղէյ Սօ-
լումանեան Կրասիլնիկեան Սեղէյ Փիւռումեան
Արեւմտեան բանակում քաջագործութիւնների համար պար-
գևատրուած ս. Գէորգի ասպետական խաչերով:

տակաւը ճոկ, եր-
գինքին իրեսաւը
ճոկ պարախողնէ
ըն փչըցնըմ, շհարնէ
կրակ տամ, ժամեր,
վանքեր քըրքանդ
անըմ, խաչ աւե-
տարան վննատակ
տամ, խօխա ըրա-
խա ջահել ջւան
տղէք թոփի ու գիւլ-
լի ոէխ տամ, թա
հինչ ա իւրանց
խօսքը պետմա ե-
րիթմիշ ինի, սաղ
աշխարքը իւրանց
պետմա կլօթ տան,
իւրանց քէֆաւը
քինան:

Աստուած էտ լեմ-
սին տոնը պրիշակ
անի, ընդրանց թաքաւերին ա-
զիկ բալէքը թուրէնն ընկնին,
խնձովաւէտը իւրանց
հօրն ու մօրը քթընհրաւը
տիւս կեայ, վէր զիդան



Գուրգէն Մնացակաճեան Խուճօնց
Վերաւորած տաճկական ուղմարեմում
և այժմս պարկած Ղարսի լազարէթում:

Ասծու պատիժ կայ, վէր զիտան
իւրանց եօղուրաւը սօր միլիոնա-
ւէր եթիմէ ըն մնացալ չըլըմը,
միլիոնաւէր տների ծոխ ա կար-
ւալ, միլիոնաւէր ջահիլնէ իւ-
րանց վեաթանան կտրուած, իւ-
րանց հօրան, մօրան ազիղ քվոր
ախպորան հեռի, էս ձիւն ձմեռնը,
ցեխին, բորան ու այազին մէ-
ջին կոէվ ըն տամ, գիւլա խա-
րաւ շատ շատերը վէր ընկնըմ,
ջան ազի, ջան ապա կանչիւաւ
հարանա չօլերըմ հոքինէն տամ,
ամմա վէջ ազին ա կտրըմ ազիղ
բալին հարային հասնի, վէր չապան,
ընդրանց ումըրը սեանըմ ա, սաղ
աշխարհը կլխըներին մթնըմ...

Թողինք լէմսին ու աւստրիու
կոէվը, ընդրանց դատաստանը
շատ չի քաշիլ ինգլիզն ու ֆրան-
զը, բելգիան ու ոուսը կանին,
ընդրանց քէթը կըկտորին, հա-
ւան նստըցնին, հի՛նչ ասինք Օս-
մանլուին, վէր աջալը ծրաւած,
կտրած քթոլի նման մէջ ա ըն-
գալ ու սօր լէմսին դիւղիւզաւը
պար կեալաւ՝ ընդրա քեօմազ
քեաշլըղ տիւս հկալ:

Օսմանլուն քանի քանի հետ
ոուսներին նհետ բեաս ա մտալ
կոէվ տալ, ամմա մէջ տեղ ինքն
ա ջարդուալ ու վերջը աջըղը իւ-
րան հպատակ հայ ազկան հանալ: Սօր էշնա էտ ջար-
տը սկսուալ ա, Մասիս սարան չրու վան, Արզրումու
Տրապիզոն հայու շհարնէն ու շընըտքընէն օսմանլուն
ու քիւրդը վէր կոխած հշտեղ զօրնէն պտտըմ ա
քըրքանդ ըն անըմ, կրակ տամ, անմեղ անտէր ան-
տիրական կնանոց ու խուխոց կուտորըմ, վեր հինչ ա
հայի ու ջախին ծոխը կտրցին, հայ միլլաթին մին հե-
տան ըշխարքաս ջնջին, վըջըցնին...

Շի՛նչ ա մնըմ հային:
Էրկու պէն: Ես հայը պէտմա իւրան անըմնու
պատիւը վննատակ տայ, էլ հա վէրը ծոխ, կլխին

դափաղ նի կեալաւ քիւրդին ու օսմանլուին մուհոջ տեռնայ, խոխան կնէզն ու աղջիկը ընդրանց զուլ շինի, վըննըտակի կորչի, եւ պետմա տղամարթու նըման եր կենայ, թորը քաշի մէյդան մնի, իւրան պապերին արիւնաւ ներկուած սարերն ու չոյերը թըշնամուն արիւնաւը ուղողի, աշխարքին հակըցնի, վէր 4000 տարուց եւել ապրող հայ աղկըմը հեալա թեասիր ա մոացալ, հեալա էտ աղկըմը ջահիլ ջւաննէ կան, վէր ասլանու սիրտ օնին ու թողել չըն վէր կիւլ ու չախկալ հային հալալ ուջաղին մուտանան ընտրա կրակին երայ ջուր ածին...

Այ իմ աղիգ հայեր, այ Ղարաբաղի, Իրևանու, Նախճուանա, Ղարսու, Զէյթունու տալան բալասիք, վէր սօր Ռուսին ու Գիւրջուն նհետ տիւս ըք եկալ Օսմանլուին երկրը կոէվ ըք տամ, արիւն թափըմ, ձեր աղկին մհար ձեր կեանքը մատաղ անըմ: Սօր լօխ հայերին աչքը ձեզ երայ ա, դուք պետմա սաղ աշխարքին ձեր զոչչաղուեթիւնաւը հակըցնիք, վէր հայը հեալա մեռած չի, հայըմը հեալա Վարդանների, Վահանների հոքին կայ, հայը աւելի շիուտ իւրան կեանքը կըտայ, քան կըթողի իւրան աղկի պատիւը վննատակ ընկնի, ընդրա տոնը տեղը սիւնգ տեռնայ,

ընրադ մարը, քուրը ախպէրը մհէզսա տէնն էլ օտարին վէզ ծոին, օտարին միւհտաջ տեռնա:

Քոասուն տարի առաջ մին երգ օնինք՝
 «Արդեօք գալու է մի օր ժամանակ,
 Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ
 Եւ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
 Դիմել դէպ իրեանց սիրուն հայրենիք»:

Սօր, այ իմ աղիգ Ասլան բալասիք, Մասիսի կլխին էզ դրօշակը բայդաղը պեց ելած փոփորմա, մին զուլան էլ Ալագեազի կլխին Լուսավերջայ կանթեղն ա վաուալ, ձեր փոնած ճանապարհը լուսավերալ. վախէլ մէք, ձեզ մատաղ, տղմարթու նման առաջ քեցէք, էտ ճանապարհը սուրը ճանապարհ ա, հինչ սրտաւ քեցալըք, Աստուած ձեր դիւակը կըկրտարի, պարով սաղ ջանաւ, օրախ սրտաւ, պարզերես ետ դեռնաք: հինգ հեարիւր տարի Օսմանլուին եսիր կտրած՝ աչքը ձեր ճնապարին քցած մեր հայ աղկին նոր կեանք, նոր շունչ տաք:

Ձեր անըմին զուրբան, ձեր տեսքին կարօտ
 Տմբլաշի Խաչան



Ս ե ռ ծ ո վ ի վ ր ա յ


Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ Ի Ձ ՈՒ Ր Ձ

Թագաւոր Կայսեր Թիֆլիսում գտնւած օրերը տաք ու պայծաս էին և կատարեալ զարնանային արև ու ջինջ երկինք: Ժողովրդի ուրախ արամազրութիւնն



Ֆրանսիական զօճը Էլզասում.

ու քաղաքի պճնազարգւած լինելը, որ Կայսեր մեկնելուց էլ մնաց մինչև Նրա անւանակոչութեան օրը, տօնական, սգեւորած արտայայտութիւն էր տաճուած ամեն կողմ: Կանայք կռանդագինս գիշեր-ցերեկ բանում էին և զօրքի ու կամաւորների համար տաք հագուստ պատրաստում: Օրփորդները լազարէթներում խնամում էին վիրաւորեալներին ու խուրջին, տապրակներ կարում մրգեղէնով, չայ-շաքարով լցնում, որ տօներին ուղարկեն ռազմի դաշտը: Սակայն եղանակը փոխւեց, սկսեց սառնամանիք և բուք-բորանի շշուկները զեկա. 18-ին յանկարծակի բերին ազգաբնակչութեանը: Էնէր-փաշան անհամար զօրքով արշաւել էր և խուժանի հետ ներս սողել Սարիղամիշ ու Արդահան ու քիչ էր մնացել, որ մտնի Թիֆլիսի նահանգը Ախալքալաք, Ախալցխայ, Թիֆլիս:



Ֆրանսիացի աճրիկեան գաղութների զօճը միացեալ պետութիւնների բանակում բնդդեմ գեմաճիայի

Պետական օրէնքով երբ թշնամին մօտենում է նահանգի սահմանին, կառավարութիւնը իր պաշտօնականներին վճարում է երեք ամսւայ ռոճիկ, նպաստ ու սրանց ընտանիքներին տեղափոխում է աւելի ներսի նահանգները: Այժմս էլ նման կարգազրութիւնը, ամբոխի հոգեբանութիւնը, անհատի ինքնապաշտպանութեան ինստիտուտը և պղտոր ջրում ձուկ որսողները ի մի շաղկապւած այնպիսի իրարանցում զցեցին ազգաբնակչութեան մէջ, որ նմանը երևի Աղա-Մահմատ շահի ժամանակն էլ չէր եղած: Երկաթուղու կայարանը շրջապատել էր տասնեակ հազար հողի, մեծ և փոքր: Վախն ու յուսահատութիւնը գործադրել էին իրանց բոլոր ազգեցութիւնն ու ոյժը սրանց վրայ: Գնացքներն անընդհատ ընթանում էին, փախչում էր ով կարողանում էր...

Բանկերից երկու օրւայ մէջ ազգաբնակչութիւնը իր պահեստի տւած գումարները հանում էր, որ ի

պատիւ բոլոր բանկերի, պէտք է ասենք, բաւարարեցին ամենքին լիութի:

Սակայն երկար չը տեկց տաղնապն ու յուզմունքը, երբորդ օրը հեռագիրն աւետեց մեր փայլուն զօրքի փասաւոր յաղթութիւնը: Ահա պաշտօնական հաղորդակցութիւնը Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից՝

Յ Ա Ղ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատճօնական հեռագիր

ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍ

Սարիղամիշի մօտ երէկ (գեկտ. 22) երեկոյեան զէմ մեր պանծալի զօրքերը լիակատար յաղթութիւն տարան թիւրքերի վրայ:

Մենք ջարդեցինք թիւրքական երկու զօրաբանակ, որոնցից մէկը զերի ընկաւ մեր ձեռքն ամբողջովին՝ զօրաբանակի հրամանատարի, զիվիզիաների երեք պետի և առհասարակ իր ամբողջ կազմի հետ:

Թիւրքերի այն փոքր զօրամասերը, որոնք կարողացան ձեխքել մեր սալմաղիժը, հաւանդով հետապնդուած և ոչընչացուած են մեր կողմից:

Սարիղամիշի մօտ լիակատար կերպով պարտուեց թիւրքաց զօրքը:

Իններորդ թիւրքական զօրաբանակը ոչնչացաւ: Զօրաբանակի հրամանատար Իսհան-փաշան, 19-դ, 28-դ և 29-րդ զիվիզիաների պետերը և զիվիզիաների պետերի երկու անձնափոխանորդ իրանց շտաբներով՝ աւելի քան հարիւրաւոր օֆիցէրների և բազմաթիւ զինւորների հետ միասին զերի ընկան:

Թիւրքերի կորուստները սպանւածներով և վիրաւորներով ահագին են: Մեր ձեռքըն ընկան շատ թնդանօթներ, զնդակացիներ, ռազմամթերքներ և սայլեր: Մեր պանծալի գնդերից մինի վաշտը զերեց 10-րդ զօրաբանակի ամբողջ հրամանատար կազմը:



Այժիցիները Ֆրանսիական բանակում

Մեր յաղթական զօրքը հալածում է թիւրքական 10-րդ զօրաբանակի մնացորդները, որոնք փորձում են ազատուել փախուստով:

Արդահանը վերցնելու ժամանակ Սիրիւրի գնդերից մէկը նետուեց ձիերով և սրի քաշեց թիւրքաց հետիոտն զօրամասերի երկու վաշտ, իսկ այդ գնդի չորրորդ հարիւրեակը ձեռք ձգեց Կ. Պօլսի Տ-րդ հետևակ գնդի զրօշակը:

երևաց երկնակամարի վրայ, սփռելով ջերմութիւն: Ծննդեան տօները անցան ուրախ:

Բայց այս փառաւոր յաղթութեան գոհ են գնացել սահմանի վրայ շատ տառնեակ հազար հայեր: Սրանք զրկւել են իրանց տուն ու տեղից, որ թշնամին փախուստ ապրով իր հասն հրդեհել, սանակիս է արել և սննչացրել: Այդ զոհերը սուս զօրքի հետ անցել են մեր կողմերը մերկ ու անանկ: Այս հանգա-



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը Ա Ի Ե Ր Ո Ղ Ք Բ Գ Ե Բ

Արդահանից մօտի թիւրքերը շտապով նահանջում են դանազան ուղղութիւններով:

Ինչ ասել կուզէ, որ փայլուն այս յաղթութիւնը արմատապէս հանգստացրեց մեծ յուզմունքը, քաղաքը վարդաբույս դրօշակներով և պայծառ արևը նորից

անգամ իրանից բազմաթիւ գնդեր սննչացնելով:

Տաճիկներից խլած մի շատ փարթամ առևտրի վրայ ոսկեկար գրօշակ Փառքի Տաճարի դուռն առաջ դրած է ի պոյց հետաքրքրողներին: Հաղարաւոր ժողովուրդը դիտում է և հրճում մեր զօրքի այս նշանաւոր աւարով:

մանքն ի նկատի առնելով վերականգնում է նախկին Եգիպտոս-մատոյց Յաննուսի-դովը, կանոնադրութիւնը նորից վերհաստատուել է կառավարութիւնից և կիրակի, դեկտ. 28-ին, ունեցաւ նա իր առաջին ընդհ. ժողովը Գրական-Գեղարվեստական Սալօնում պ. Հ. Առաքելեանի նախաձեռնութեամբ և նախագահութեամբ: Ընդհ. ժողովը ընտրեց Նոր Ընկ. Վարչ. անդամներին, որն արդէն ստանձնեց իր պաշտօնավարութիւնը:

Թիֆլիսով են անցնում տաճիկ զերինները, որ տարւում են ներքին նահանգները: Իսկ փախստականներին ապաստարան կը տրուին հայաբնակ վայրերում:

Թիֆլիսով են անցնում Ամերիկայից, Բոլգարիայից, Ռումինիայից և հլուսիսային կովկասից ու Ռուսաստանից եկող հայ կամաւորների վաշտերն ու գնդերը: Սրանք բոլորն էլ զգեստաւորւած են շատ վայելուչ ու ապահովւած նիւթապէս:

Փառաւոր յաղթութեան մէջ շատ մեծ դեր են կատարել հայ կամաւորները, իսկ Համազասպն իր իրմբով կատարեալ հրաշք իր փոքրաթիւ խմբով, մի քանի տառնեակ



**ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՎ-
ԿԱՍԻ ՀԱՄԱՐ ԵՒ**

Ն. Դ. ՆԻԿՈԼԱՆԻ

Քառասուն տարի է անցել այն օրից, երբ հիմք դրեց Կ. Ռ. Ե. Ը. Թիֆլիսի բաժանմունքի, որի հիմնադիրներ համարում են այժմեան նախագահ Կ. Մ. Ալիխանովը, Ա. Օ. Միզանգարին և Ս. Ի. Սաւանելին:

Ըստ տեղեկութեան՝ սովորողներ, բացի խմբական երգեցողութեան դասարանը ձրի. յաճախողները, առաջին տարին ընդամենն եղել են 10 հոգի, և, չնայած դրան, հիմնադիրները, ստանալով Փոխարքայ Մեծ Իշխանից 1876 թ. հոկտեմբերի 12-ին հաստատուած դպրոցի կանոնադրութիւնը (որի հաստատման օրից դպրոցը համարում է պաշտօնապէս բացւած) վճռում են վարձել յատուկ բնակարան...*)

Այժմ այդ դպրոցն ընդարձակել է իր գործունէութիւնը, սովորողները 500 հոգուց աւելի են (հաշուարձուութիւն 1913 թ.), դասատուների թիւը նոյնպէս խիստ մեծացել է. վարչութեան նախագահն է պ. Կ. Ալիխանեանը:



Թիֆլ. Կայսեր. Երաժշտ. Ընկ. Ուսումնարան

Ամբողջ հիմնարկութեան գլուխ կանգնած է նշանաւոր արեւեստագէտ Նիկօլայ Դմիտրիևիչ Նիկօլայև:

Հասել է ժամը, երբ պիտի իրականանայ Կովկասի բաղձանքը—տեսնել այդ դպրոցը (ուր այնքան երիտասարդութիւն ստացել է իր երաժշտական ուսումը, տարածելով նրան հետո ու հետո)— Կոնսերվատօրիա: Կովկասը գտնուում է բացառիկ գրութեան մէջ:

*) Ալօիգ Օսիպովիչ Միզանգարի. Կովկասեան երաժշտութիւն վ. Դ. Դորդանեան.

ա) հետո է ընկած երաժշտական կենդանից, և բ) հարուստ է երաժշտական հում նիւթերով:

Մի կողմից մեզ հարկաւոր են թէօրիտիկ երաժշտագէտներ (կոմպոզիտօր), որոնց նպատակը լինէր հաւաքել, մշակել ամբողջ հում նիւթը. մենք պէտք է ունենանք մեր Գլխական, Գրիգը, Լիստը և այլն, արեւեստագէտներ, որոնք կարողանան ձուլել երոպական կուլտուրան մեր ժողովրդականի հետ, առանց հեռանալու ազգային շրջանակից, որպէսզի հիմք դրուի հայկական, վրաց, թուրքական, օսետեան և այլ դըպրոցների, ինչպէս որ կան Նորվեգիականը, Ֆինականը, լեհականը և այլն: Հարկաւոր են այնպիսի մշակներ, ինչպէս օր. Զ. Պալեանը, Կոմիտաս վարդապետը:



Ն. Դ. Նիկոլանի
Տեսուչ թիֆ. Կայսեր. երաժշտ. ուսումն.

Միւս կողմից Կովկասին հարկաւոր են հմուտ երաժիշտներ (վիրտօւզի) և ղեկավարներ (дирижеры), տեղացիք խիստ ծանրաբեռնուած են աշխատանքով, եկտորները ուզում են մեծ եկամուտ ստանալ, որպիսին կարող են տալ միայն Թիֆլիսը և Բագու, ուստի և հարկաւոր են այնպիսի արեւեստագէտներ, որոնք շըրջէին գաւառական քաղաքները, ծոնօթացնելու երաժշտութեան կողմից չափազանց յետաճաց գաւառի հասարակութեանը երաժշտական գրականութեան հետ:

Մեր կոնսերվատօրիայում երաժշտական լիակատար ուսում ստացածները, ունենալով բաւականաչափ պաշար և հաստատ հայեացքներ, կարող են համարձակ գնալ արտասահման, քանի որ կոնսերվատօրիան աւարտածների համար, որոնք իրանց մանկութիւնը և պատանեկութիւնը անց են կացնում հայրենիքում չը բաժանելով նրանից այն վտանգաւոր հասակում երբ հայեացքները զեռ հիմնաւորուած չեն լինում, արտասահման գնալն այլևս համարեա ոչ մի վտանգ չէ ներկայացնում օտար արեւստով չափազանց հրապուրեւելու տեսակէտից: Ունենալով գիտելիքների հարուստ պաշար և հաստատ հայեացքներ, երիտասարդ արտիստը նախապատրաստուած կը լինի քննարար վերաբեր-

ւել ամեն բանի և նա կը լինի հէնց այն արւեստագէտը, որը կը միտցնէ կրօնական կուլտուրան իր ժողովրդի բանաստեղծութեան հետ: Այդպիսի արւեստագէտին էլ ոչոք միակողմանի չի անւանիլ:

Լիստն էլ չէր աշխատում այդ ուղղութեամբ տանել իր աշակերտներին:

Բերում եմ նրա աշակերտունի յայտնի դաշնակահար և երաժշտագէտ Խոսեֆ Բրօնսարդի խօսքերը:

Ղեկավարելով ինձ, նա (Լիստը) նախագգուշացնում էր ինձ երաժշտական միակողմանիութիւնից, և ես, օրինակ վերցնելով այդ զարմանալի արտիստի քական ընտելութիւնից, սովորեցի ամեն տեղ որոնել երաժշտական գեղեցկութիւններ և ընդօրինակել նրանց առանց ուշադրութիւն դարձնելու ոչ հեղինակի վրայ, ոչ էլ այն ուղղութեան, որին նա պատկանում էր» (La Mara. Studienköpfe. Ingeborg Bronsart.):

Պէտք է յուսալ, որ մեր հասարակութիւնը նոյնպիսի ջերմ վերաբերմունք կունենայ կոնսերւատօրիայի մասին, ինչպիսին նա ցոյց տւեց Պօլիտեխնիկումի վերաբերմամբ, և իր առատ նւիրաբերմամբ հնարաւորութիւն կը տայ հիմնել թոշակներ երաժշտագիտութեան առւել ընդունակ աշակերտների համար, որոնք աւարտելով Թիֆլիսի բաժանմունքի լիակատար դասընթացը միջոց ունենային զնալու արտասահման կատարելագործելու համար:

Թոշակ այն տաղանդաւոր հմուտ երաժիշտի համար, որը կոնսերւատօրիայի լիակատար դասընթացն աւարտելուց յետոյ հնարաւորութիւն ունենար զնալ արտասահման կատարելագործելու:

Այդպիսի թոշակները ինչպէս պրէմիա կան մայրաքաղաքի և արտասահմանեան կոնսերւատօրիաներում:

Ճանկանք, որ մեր ապագայ կոնսերւատօրիայում բացւէին Meister Klasse դաշնամուրի կուրսով տաղանդաւոր դաշնակահարների համար: Այս միտքը հեշտ կարելի է իրագործել այնպիսի խոշոր ուժի օժանդակութեամբ, որպիսին է դաշնակահար Ն. Դ. Նիկօլայեւը:

Նիկօլայ Դմիտրիևիչ Նիկօլայեւն իր երաժշտական ուսումն ստացել է Պետերբուրգի կոնսերւատօրիայում, ուր նա մտել է խիստ վաղ հասակում:

Երկու տարում նա փայլուն կերպով աւարտեց դասընթացը (դաշնամուրի բաժինը պր. Շտէինի, երաժշտագիտականը—Իօհանսէնի և Կլադուսովի մօտ) և ժիւրին միաձայն պարզեց նրան մի դաշնամուր:

Սակայն երիտասարդ արւեստագէտը դրանով չը սահմանափակեց իր երաժշտական ուսումը, գնաց արտասահման կատարելագործելու. նա ապրեց Գերմանիայում—Լէպցիգում, Բիրլինում, իսկ Դրեզդենում յաճախեց Անտօն Բուրինշտէնի Meister Klasse-ը:

1895 թւին Ն. Դ. Նիկօլայեւը եկաւ մեզ մօտ կովկաս Կ. Ռ. Ե. Ը. Դաշնամուրի դասարանում աւագ դասատուի պաշտօնով:

Տաղանդաւոր դաշնակահարը շուտով զարձաւ հասարակութեան սիրելին և արժանացաւ այն ժամանակի երաժշտութեան աշխարհի ուշադրութեան: Նիկօլայեւը յաճախ է բեմ դուրս եկել Կ. Ռ. Ե. Ը. Թիֆլիս բաժանմունքի սարքած սիմֆօնիական և այլ կրեկոյթներում, նոյնպէս և իր սեպհական Klavierabend' ներում, միշտ ունենալով ահագին յաջողութիւն:

Երկու տարուց յետոյ տաղանդաւոր երաժշտագէտը թողնելով Թիֆլիսը գնաց Պետերբուրգ իբրև աւագ դասատու տյնտեղի կոնսերւատօրիայում, ուր նա մնաց հինգ տարի:

Իսկ վերջին տասն տարին Նիկօլայեւը Տետու է Կ. Ռ. Ե. Ը. Թիֆլիսի բաժանմունքի: Ն. Դ. Նիկօլայեւը բազմակողմանի զարգացած մարդ է. ինչպէս գիտական, նոյնպէս և երաժշտական կողմից նա ունի մեծ պաշար և պատկանում է այն հազաւագիւտ տաղանդաւոր մարդկանց դասին, որոնք միշտ ձգտում են առաջ

ու առաջ, ընդարձակելով իրանց աշխարհայեացքը ձեռք բերելով նոր տեղեկութիւններ ընթերցանութեան և ճանապարհորդութիւնների միջոցով:

Դուրսին է նրա գործը. ինքը լինելով բարձր—կուլտուրական, նրբազգեաց և փափկասիրտ, բանաստեղծութեան և արւեստի աշխարհում ապրող, զարմանալի չէ, որ ղժւարութեամբ է տանում իրան շրջապատող խորդաւանքները, նախանձը և անկուլտուրականութիւնը:

Գալով նրա դաշնակահարութեան, նա իբրև բացատրող պակաս չէ եւրօպական ամենալաւ հուշակ ունեցող դաշնակահարներից. ինչպէս տեխնիկայի մէջ, նոյնպէս և բանաստեղծութեան, երաժշտական երկերի տրամադրութեան մէջ խորասուզելու և արտայայտելու գործում նրա մատերի զարկը զարմանալի է:

Լիստը նա կատարում է հրավառ, վսեմ և խորունկ, ամենամեծերի կերպով:

Նրա Շոմանը այն բանաստեղծ ոտմանտիկն է, մշուշապատ խորհողը:

Նրա Շոպէնը մաքուր է ինչպէս շուշանը, բանաստեղծական և պարզ առանց պչրանքի, այն ամենանուրբ գեղգեղանքով, թեթև ինչպէս մեղմ գեփիւռը:

Երբ Ն. Դ-ն կատարում է Բախը, նրա նւագի մէջ զգում էք հաւատ, ճշմարտութեան և բարձր արւեստի հաւատը:

Նիկօլայեւի գրչին է պատկանում մի ամբողջ շարք դաշնամուրի երկեր—տասներեք համար, Իւրգենսօնի հրատարակած:

Նրանցից է շքեղ Humoresque № 1, № 6 Allegro appassionato.

Առաջին թեման լի է փոթորկով ու յուզմունքով, Cantabile-ի երկրորդ թեման մի տեսակ անվճռական հարց է տալիս մի ինչ որ բանի մասին և երկրորդ եղանակի մէջ տալիս է քնքոյշ, գեղեցիկ, հոգեթրթիւ պատասխան:

№ 12 En Auto mne.

Ո՞վ չէ պատկերացնում աշնան տերևների սօսափիւնը, մօտալուտ վախճանը գուշակող, մի ծաղկից դէպի միւսը թռչող, վախեցած թիթեռնիկներին:

Իսկ երկրորդ թեմայի վեհութիւնը. ի՞նչ է ասում նա...

Հետաքրքիր է նկատել, թէ ինչպէս սիրով ու զգացմունքով և ինչպիսի վարպետութեամբ Նիկօլայեւը յարմարեցնում էր դաշնամուրի նազակցութեան համար հայկական «Հայրիկ, հայրիկ», (Hairik) երգը: Տաղանդաւոր երաժշտագէտը ներածութեան համար իբրև նիւթ վերցրել է երգի իրան հղանակը. ներդաշնակութեան համար ևս ընտրել է երգի մեղոխան գործ զնելով հայերէն երգերի համար խիստ ընտրող սիպտակկորդի երկրորդ աստիճանը: Ն. Դ-ն ընդգծել է նրա ջերմութիւնը, արևելիան հմայքը և բարձր տրամադրութիւնը, նրա մռայլ, բանաստեղծական ընտելութիւնը:


Կենսուրախ նախերգանքը օրկեստրի համար:

Դաշնամուրի Համերգ e-moll երեք մասից բաղկացած: Առաջին և վերջին մասերում թեման հարուստ է հարաւային արեգակի պայծառ կիզիչ ճառագայթներով. երկրորդ բանաստեղծական քնքոյշ մասը շարժւում է բացվարդագոյն և բաց երկնագոյն քնքոյշ երանգների մէջ:

Սիմֆօնիկական պօէմը «Լեզնդանների աշխարհում». այս բանաստեղծական արտադրութիւնը տանում է մեզ դէպի միջին դարերի ասպետական ոգին. նրա թեմաները երբեմն համարձակ ռազմական են, երբեմն մռայլ միստիքական, երբեմն ոտմանտիքական: Այս երկասիրութիւնը օժտւած է խորութեամբ, տեմպերամենտով ու գոյներով:

Շնորհիւ Նիկօլայեւի նման տաղանդաւոր անձնաւորութեան ջանքերի, կովկասը շուտով կունենայ իր կոնսերւատօրիան:

Ովսաննու Տէր Գրիգորեան



Կոմս Սո. Տիցցա

Ունգարիայի մինիստրների նախագահ, որ նորերս Բեռլինում այցելեց ում հարկն է: Հաւանական են նոր սերտորդներ Գերմանիային յօդու ածաղեալ պետութիւններէ:

Մ Ա Մ Ո Ւ Լ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Նախորդ տարւայ Տարազի հոկտ. №-ում, (երես 105) մենք վերջացրինք Համաշխարհային պատերազմ մեր տեսութիւնը հետեւեալով՝

«Եթէ Անգլիան ժամանակին իր նաւատորմից Անվերս և Օստանա հանէր, գուցէ Ալֆրէդը նոյնպէս չըխոնարհէր տրագիցիաներին, թէ՛ թագաւորներին չէ թոյլատրում հրացան կրելը, ու իր առաջին գնդակով վիշապ վիշէլմի ճակատը ջախջախէր: Իսկ այսօր Անգլիան պարտաւոր է հաշի առնել կրուպի 42 դիւմանոց դժոխային հրանօթիւնը և լէզիօն ցեպիւիւնները:

Ինչու յապաղեց Անգլիան, արդեօք շնորհիւ իր դարաւոր զանազակոտութեան, թէ՛ ռազմական այլ պատճառներով, այդ զեռ լուսաբանած է:

Այն ժամանակ մենք աւելին ասելով պատճառները լուսաբանելու հարկ չըհամարեցինք: Այժմս երկու ամիս յետոյ է միայն, Բերգիայից հեռագիրը «Рус. Вѣд» լրագրին և այնտեղից էլ «Кавк. Слово»-ի յատուկ թղթակիցը հետազրում թիֆլիս թէ՛

«Չինւորները համոզւած են, որ Անվերսը թշնամուն (Գերմանիային) յանձնելու մէջ իրանք (բիլգիացիք) մեզ չունին: Սրանք (բիլգիացիք) ասում են, թէ բերդի պաշտպանութիւնը մենք յանձնեցինք անգլիացիներին, որոնք էլ բերդը անձնատուր արին»:

«Кавк. Слово» 23 дек. 914 г. № 84. Вечер. телегр. собств. корресп.

Այս մի փոքր օրինակը մենք առաջ ենք բերում միայն ապացուցանելու, թէ որ աստիճան արագ են տեղեկութիւններ ստանում եւրոպայից, նոյնիսկ մայրաքաղաքի

թերթերը, որոնցից և յաճախ, իբրև թիւնը ցոյց յատուկ թղթակցութիւններ, այն էլ տայ և կահուագրով, վաճառում են գաւարողանայ իր սական լրագրներին:

**

Տաճկական բանակի յանկարծակի մեր սահմանն անցնելը, իրարանցում գցեց և մեր մամուլի մէջ, նա նուազ է ու որը գեկտ. 18-ին երեկոյեան կաթոյլ: Քաղանանց Բարձր. կուրսերի բնակարանում ունեցաւ հրատապ խորհրդակցութիւն: Մասնակցում էին թիֆլիսի ամբողջ մամուլը և մայրաքաղաքի թերթերի թղթակիցները:



Հայ բեռնակիրը Կ. Պոլսի երկարուղու կայարանում:

Ներկայ 24 հոգուց, հազու մենք ճանաչում էինք չորս հոգու. բոլորը նոր անձնաւորութիւններ:

Խօսեցին, շատ խօսեցին, բայց սրբան թիւրիմացութիւն, սրբան անտեղեկութիւն, սրբան խրոխտանք ու մեղադրանք:

Սակայն երբ մամուլը իր ոյժը, սեղն ու նշանակու-



Գրաճ Յեպպիկն

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

—Պարով, Սօնա-բաշի, թագաւորից շքանշան էր ընի:

—Պարով, քրմատող, քունն էլ ընի շքանշան: Ե՞սքան վախտ, Մուքի, ը՞ստից իր, խէ՛ չիր ըրում:

—Արաստահման էի, Սօնա-բաշ, նոր ըմ եկալ:

—Վոյ երևի քու արտասահմանը համ...

—Խէ՛, Սօնա-բաշի, խէ՛յս ըտէնց ասում, Ֆրանսիայից ըմ կեալիս:

—Մեզ պարեկամ ըն:

—Հալրատում վէր:

—Դէ՛ լաւա, լաւա, պարով, հազար պարով ըս եկալ: Դէ՛ եկ գօզինաղ կեր:



Տ ա ճ կ ա կ ա ն Կ ա մ Ի Կ Ի Է Գ օ Ր Բ Բ

Ն ր ա գ ո յ ն հ ր ա տ ա ր ա կ ո ռ թ ի ռ ն ն ե ր

Խմբագրութիւնս ստացել է հե-
տևեալ հրատարակութիւնները՝

Փառասուն տարուան աշխատա-
ւորք Մկրտիչ Փորթուգալեան,
Յարգանքի պատկ հիւսեցին Ա. Կ-
նունի է., Գալէմբարեան Զ.,
Եսայեան Զապէլ, Երամեան Լ.,
Զարգարեան Ռ., Թէոդիկ Արշա-
կունի, Թէթևեան Վ., Թաթակ Գ.,
Հրանդ, Նաթանեան Միք., Շահ-
պազ Բ., Շահպազեան Յ., Շահ-
րիկեան Յ., Շահրիման Վ., Չա-
ուուշեան Ե., Չէօկիւրեան Տ.,
Չղեան Ս., Պաղիլ-խան զոկա.,
Սիւրիլ, Վասիլեան Պ., Վարուժան
Գ., Վոսմեան Ա., Տէր-Կարա-
պետեան Գ., 72 մեծագ. եր. 4.
Պօլիս, հրատարակած Հայաս-
տանի ազատութեան զինուոր, աս-
վիրայ յեղափոխական Մկրտիչ
Փորթուգալեանի ՎԼ-ամեայ յօ-
րեկեանի առիթով: Կենսագր. գր-
քի է Տ. Չէօկիւրեան:

Բաղմբերախոս ուսուցիչ, գրական-
նագէտ, հրատարակախօս, Հայ-
աստանում յեղափոխութեան ա-
ռաջին կայծերը սիրող, անդրա-
նիկ շղթայակապ Մկրտիչ Փոր-
թուգալեանին անցեալ գործնան
հրատարակում իր քարտրալայրից՝
Մարտէլից 4. Պօլիս, տաճկա-
հայերը շուքով կատարեցին յօ-
րեկեանը: Այդ տօնին Աղբիւրի և
Տարազի ներկայացուցիչն էր հրա-
պարակախօս, դաշնակց. հիմնա-
դիր աւագագոյն անդամներից
մէկը և այսօր փայլուն գործօն
պ. է. Ակնունի: Մինք հնարաւո-
րութիւն չունեցանք ժամանա-
կին Տարազում տալ վաստակա-
ւոր Յորեկար Մկրտիչ Փորթու-
գալեանի գործունէութեան նկա-
րագիրն ու պատկերը, այդ կը
կատարենք, երբ մեր Գրական-
Գեղարվեստական Մարտում կը կազ-
մակերպենք յատուկ երեկոյթ
նախնայած ասօվիրայ հայրենասէր
ազատամարտիկին:

Ստեփան Կանախանց՝ Անյայտ
զատակներ Հին Հայաստանի Լրգի-
նաց և Ժաղիլից աշխարհ, Արգն-
արգին (Աղծնիք), Գրաց աշ-
խարհ (Գտան աշխարհ) Մարաց
Գաւառ (Մարգեաւառ) Ռուստակ
(Գեաւառ) Գարստնացիք (Գա-
րստունացիք) Գարստն և Բա-
ղատական 184 եր. գինը 75 կ.:
Հեղինակի այս ուշագրաւ աշխա-
տութիւնը՝ Լ. Ղ. Ալիշանի և
Երոզական այլ գիտնականների
ուսումնասիրութիւնների (Հիւր-
շմանի են) ճշտումն ու ընդար-
ձակումն է ի նպաստ Հին-Հայաս-
տանի աշխարհագրութեան, մա-
սամբ և պատմութեան:

Մարգարիտիկ Լայ Բանակի-
տարեան Բ. գիրք, ԼՂՄԻՍԸՆԻ
զատաւ, ժողովից եր. Լայախան,

հրատ. Լ. Ազգագր-Ընկ. ձօնւած
վաղաթառամ Մարգարիտի յի-
շատակին իր մայր Հայկանուշ
Մարտիրոսեանի կողմից, 268
եր., գինը 1 ռ.: Ընդամեն 33
գոհար, որ պատմել են Լ. Ազգագր-
Ընկ. ժրջան ներկայացուցչին
Օշականում, Վաղարշապատում
և Փարփում: Մէկը միւսից սքան-
չելի և թանգագին պատմածք-
ներ, հէքիաթներ, հետքները լե-
գենդար աշխարհներում խորա-
սուզւած:

Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեան-
քի և վարդապետութիւնը, հիւս-
ւած չորս Աւետարանիչներից
ժամանակագր-Կարգով, Բ. րա-
բեփոխ. պատկեր. տպ., կազմեց
Տանուս ա. Բ. Մարտիան 316
եր. գինը 1 ռ. 20 կ. գիրքը
նւերւած է իր աշակերտներին,
որ միևնոյն ժամանակ պատշաճ
դասագիրք է նրանց համար, ու-
րոնք անկարող են հասկանալ գրա-
բան Աւետարանը:

Գեղմանական նոր գրականու-
րեան պատմութիւն, Նախասոս
ակնարկով սկզբնական շրջանի
մասին, կազմեց Գէորգ Ճեմար.
ուսուցչապետ Գէորգ Ալթունեան,
275 եր., գինը 1 ռ., հրատար.
Դէորգ. Ուն. Մինք միշտ էլ
տանածին հաճոյք ենք դրում,
երբ թերթում ենք մեր գրտն.
երիտասարդ և վաստակաւոր ս.
Էջմիածնայ Գէորգ Ճեմ. դասա-
տուներէ կազմած ու յորինած
գրքերը: Սրանց աշխատութիւն-
ներից բուրում է հասուն մտքի
ու գիտութեան արտադրութիւն,
լուրջ ու բարեխիղճ ուսումնա-
սիրութիւն և արտայայտութիւն
նրաթիւ Գ. Ալթունեանի այս նոր
աշխատութիւնը համարձակ կա-
րող է ծառայել ոչ միայն իրրև
ձեռնարկ ձեռնարանի և միջնա-
կարգ մեր գաղտնիների ուսանող-
ներին, այլև իւրաքանչիւր անհա-
տի, որ կը կամենայ ծանօթանալ
գերմ. նոր գրականութեան հետ:
Գրքի վերջին կցւած է ձեռնար.
Բ. րաբանի ուսանող Ս. Ոսկեր-
չեանի գերմ. գրականութիւնից
հայերէն թարգմ. երկերի ցանկը:

Մ. Я. Алавердян-Граф Нв. Ө.
Паскевичи Эриванский, и его
дѣятельность на Кавказѣ въ
очеркахъ армян. историка. 27
եր., գինը (?). Մ. Ալաւերձերդ-
եանց վաղուց ի վեր Պետրոգրադի
ուսումնասիրութիւն մէջ և տանածին
բրօշուրներով լոյս է ընծայում,
յատկապէս հայկական աղբիւր-
ներից քաղելով, կենսագրական-
քարակտերիստիկներ հայկա-
կան սպարաբուրում, Կովկասում
պետական, հասարակական, գրա-
կան գործիչների, սալով և ոսնե-

րին նմուշներ հայ հեղինակների
երկերից:

Մ. Ալաւերձերդեանցի կազմած
Կոմս Պասկեւիչ-Երեւանեան ու-
շագրաւ է:

Սայ-Ման, Ռուս-Տանկական
պատերազմը (1877—1878 թ.)
և նրա նախագի հերոսնե-
րը, Ա. Գեներալ-աղիտանա
Լորիս-Մելիքով, լուսանկարով և
պատերազմ. բեմի քարտէզով,
60 եր. գինը 30 կ.: Ժամանա-
կին շատ յարմար ձեռնարկու-
թիւն է, որ սկսել է Սալ-Մանը
և իր գողտրիկ գրչով պաշտօնա-
կան փաստագրերից քաղելով մա-
տուցանում է հայ ընթերցողին:

Վարդգես Աղանեան., 1) Օդ-
պոֆ. Ու. Վազնէր, 10 նկարով,
62 եր. գինը 20 կ. 2) Երկնային
լուսատուներ, նոյն հեղինակի,
12 նկարով, 64 եր. գինը 20 կ.,
3) Հեղեղ, պատմածք Էմիլ Զօլայի
պատանիների համար 51 եր.,
գինը 20 կ. հրատ. Ն. Աղանե-
ան սպարանի Մանուկների
գրադարան №3, 4 և 5: Վա-
ղաթառամ ուսանող- գրականա-
գէտ Վարդգես Աղանեանցի թո-
ղած ձեռագիր շատ թարգմանու-
թիւններից այս երկը, որ լոյս
է ընծայել քոյրը՝ օր. Նարդ
Աղանեանը, տպագրւած են թարգ-
մանչի պատկերով ու շատ խնամ-
քով, մի-մի անթառամ պսակ են,
որ յիշատակելի կանեն ընթեր-
ցողների մտքում ու սրտում մի
մատաղ ոյժ, որ մահւան տագնա-
պումն էլ չէր դադարում իր գրա-
կան աշխատանքը կատարելու:

Ներքե ա. Բ. Գեղամեանց՝ Ու-
րայէլ Օրին և իր քաղաքական
ծրագիրը, 79 եր. գինը 25 կ.,
հրատ. Ուր. Ղ. Բէզարեանցի:
Հեղինակը իր պատմական տե-
սութիւններով, քաղածքներով
շարունակում է մատակարարել
օգտակար տեղեկութիւններ, որ
սրտատրոփ կարդում են, մանա-
ւանդ, մեր ոչ շատ հեռւոր ան-
ցեալն իսկ չիմացողները. իսկ
այդպիսիների թիւը մեր մէջ լե-
գիօններ են:

Ս. Էջմիածնայ հրատ. Օրա-
ցոյց 1915 թ. փառակազմ:

Վիտ Շակունիսայա Փրանս.
թարգմ. փոխադր. Մետրոպ վ.
Մարտուղեանց. 60 եր. գինը 20
կ. հրատ. Կ. Լ. Հր. Ընկ. Վա-
ղարշապատի ճիւղի: Հնդիկ գրա-
կանութեան նշանաւոր Շակունի-
տալաի հետ հայերիս առաջին
անգամ ծանօթացրեց գիտնական
բանաստեղծ գր. Մ. վ. Մարտու-
ղեանը իր դասախօսութիւնով,
որ կարգաց անցեալ տարի Գրա-
կան-Գեղարվեստական Մարտում և
ապա տպագրեց հատուածներ Տա-

րագում: Հրաշագեղ այս ստեղ-
ծագործութիւնը հայերէն արտա-
յայտել է փոխադրողը վառվառն
և պերճ լեզուով:

N. Haro.-Intercession de St.
George. Esquisse des moeurs ar-
meniennes de Tiflis. 16 եր. գինը
20 կ.: Դիւրորէի արժանաւոր
աշակերտ պ. Յարոն չէ դադա-
րում իր լուսան շարունակ գե-
լու կարեր գանձանակների մէջ:
Իր ազգագր. գործերից մէկի այս
Ֆրանսերէն թարգմանութիւնն
էլ կատարել է հէնց ինքը հեղի-
նակը վայելուչ:

Մ. Չմշկեան 1) Ժողովրդա-
կան պատկերազարդ օրացոյց
1915 թ. 94 եր. գինը 30 կ., 2)
Армянский календарь на 1915 г.
с предсказаниями, 128 եր. գինը
20 կ.: Մ. Չմշկեանի օրացոյց-
ները վաղուց վայելում են հոչակ
օրացոյցների մէջ, մանաւանդ
ուսերէնը, որի գուշակութիւննե-
րին շատ են հաւատում Կովկա-
սաբնակ ոսներն ու ոսախօսները:

Марія Веселовская—Бельгія до
войны 1914 г. с иллюстраціями,
հրատ. К-во «Звезда» 62 եր.
գինը 40 կ. յօգուտ Բելգիացի-
ների, որոնք վնասել են գերմ.
արշաւանքից, վաճառում է այս
գիրքը: Կազմւած է ուշագրաւ և
պճնագարդած Բելգիայի տեսա-
բաններով:

Юриі Веселовский — Трагедія
турецкой Арменій, հրատ. К-во
«Звезда» 47 եր. գինը 25 կ.:
Հեղինակի անունը բաւականա-
չափ յայտնի է հայ ընթերցողին:
Այսօր էլ նա հանդէս է գալիս իր
գեղ գրչով, սիրտնաք վիշտ-հա-
յութեան և յոյս նրա անուշա...
վերջապէս վերածնութեան: Բա-
նաստեղծի խօսքերով է սկսում
հեղինակը՝ «О край, обреченный
на скорбь и страданье, что бу-
дет с тобою в грядущіе дни?...
Յուսանք, որ կը լինի այն, ինչ
իրաւունքն ու տենչանքն է այդ
ողբալի աշխարհի և նրա ցաք ու
ցրիւ մարտիրոս գաւակների:

Տախտակ օրացոյց 1915 թ.
Հալաբաղի ս. Կարապետեան
ուսումն. հոգաբարձ. հրատարա-
կութիւն, յօգուտ այդ դպրոցի:
Նպատակաւորմար հրատարակու-
թիւն և սիրուն տպագրութիւն
ս. Սահակի, ս. Մետրոպի և Վե-
հափառ Կաթողիկոսի պատկեր-
ներով: Գինը ըստ ցանկութեան
յօգուտ դպրոցի:



Տարածեցէք ԱՂԲԻԻԲ եւ ՏԱՐԱՁ ձեր շրջաններում

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

- Յիսուս մտուրի մէջ, մոզերի երկրպագութիւնը:
- Կարթագինացի կանանց նւէրը:
- Բէթղէմէմ:
- Ռուսական Արծիւը հովանի Մասեաց Աղանուն (3 էսքիդ):
- Փախստականները տաճկ. սահմանից:
- Տէրունական ընտանիքը:
- Ճրագալոյց:
- Պրոֆեսոր Յակոբեան:
- Ճրանս. օգնաւը Բելգ.
- Եթ զլիսանի վիշապի գնդակահարումը:
- Հոլանդիայի ամերուս:
- Հոլանդ. պահեստի նաւաստիներ:
- Պողոս Դօլուխանեան:
- Յովսէփ Սունունց:
- Գրիգոր Գեղ. Թումայեան:
- Գուրգէն Մն. Սունունց:
- Բօզդան Դ. Աւան-Իւզըաշեան:
- Սերգէյ Ս. Կրասիլնիկեան:
- Սերգէյ Փիրումեան:
- Սև ծովի վրայ:
- Ճրանսիական զօրքը Էլզասում:
- ԱՖր. գաղութ զօրքերը:
- Ալժիրի զօրքերը:
- Քրդերը Հայաստանում:
- Ն. Դ. Նիկոլան:
- Թիֆ. Կայսեր. Երաժշտ. ուսումնարան:
- Կոմս Ստ. Տիցցայ:
- Դրաֆ Յեպպիլին:
- Տաճկ. համիդիէ զօրքը:

Ն Ի Ի Թ.

Բացարձակ նամակներ
Սոված ենք...
Լիկա
Իմ նամակները օր. Յուսիկեանին
Յիշում ես 25 տարի առաջ
Դօշունլուղ տարի ա
Պատերազմի շուրջ:

Տ. Նազարեան
Ատրպետ
Լ. Մարկոսեան
Բաղամէս
Վ. Թումանեան
Տմրլաջի Խաչան

ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կոնսերվ. նշանակ. Կովկասի համար } Ովսաննա Տէր-Գրիգորեան
Ն. Դ. Նիկոլան

Մամուլ
Նոր տարւայ այցելութիւններից:
Գրքերի շուրջ:
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարազի ներկայ №-ի հետ ուղարկում է և Աղբիւրի
№ 1-ը ու Լարէմիա Պասի հասւածական-սախտակ պատ-
կեազարդ օրացոյցը 1915 թ. նրանց, որոնք աղէկ
բաժանորդագրել են 1915 թ. համար:

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. Գ Ե Ո Ր Գ—Բ Ե Կ Ե Ա Ն

(Вельяминовская, 8)

Ա Չ Ք Ի Հ Ի Ի Ա Ն Դ. Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ընդունելութիւն { առ. 10—1 ժ.
երեկ. 5—7 ժ. (5—4)

Գիմնագիայի բարձր դասարաններից ռուս մի առակերս սովո-
րեցնում է ստորին դասարանների առակերսների դասերը քե յեզու-
ներից եւ քե առակերսներից:

Վ Ճ Ա Ր Ը Ա Մ Ե Ն Ա Չ Ա Փ Ա Ի Ո Ր

Գիմիլ' Курсы Иѣнія г. Броджи. 3—5

Մ Շ Ա Կ

44-րդ ՏԱՐԻ

44-րդ ՏԱՐԻ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՛ 12 և 11 ամիսը 10 ռ., 10 ամիսը 9 ռ.,
9 ամիսը 8 ռ., 8 ամիսը 7 ռ., 7 և 6 ամիսը 6 ռ., 5 ամիսը 5 ռ.,
4 ամիսը 4 ռ., 3 ամիսը 3 ռ., 2 ամիսը 2 ռ.:

«ՄՇԱԿԸ» ունի սեփական քոլեկիցներ արեւելեան եւ
կովկասեան ռազմաբեմերի վրայ—Վարժա եւ մօտակայ
երջաններում՝ Կարս, Սարիլամիշ, Բայազիլ եւ այլն:

Պ Բ Է Մ Ի Ը Ն Ե Ր

«ՄՇԱԿԻ» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1915 թ.
համար (սկսած յունուարի 1-ից 1915 թ.) միանուպ կամ մաս-մաս
վճարած կունենան 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան
1915 թ. ընթացքում ՁՐԻՍՏԱՐ հետեալ նոր լոյս տեսնելիք
գրքեր:

1) „Տանջաձր“ Մեծ վէպ ՇԱՀՐԻԱՐԻ, Նա յկական
յիղափոխական կեանքից:

2) „Հայկական հարը“ լուսարանված դոկու-
մէնտներով, մի
ստուար հատոր, պատկերներով:

Ծանօթ. — Արտասահմանեան բաժանորդները պրէմիաները
ստանալու համար պիտի ուղարկեն ճանապարհածախքը, որի
բանակը կը յայտարարուի իր ժամանակին:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ. Редакция «МШАКЪ» Արտասահ-
մանից՝ Tiflis, Rédaction du journal «MSHAK».

ՀՈՐԻԶՈՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

«ՀՈՐԻԶՈՆ»-ը արժէ Ռ. Ա Ս Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Տ Ա Ր Ե Կ Ա Ն 8 Ռ Ո Ւ Բ Լ Ի

6 ամիսը 4 ռ. 50 կ. 3 ամիսը 2 ռ. 40 կ. 1 ամիսը 80 կ.
«ՀՈՐԻԶՈՆ»-ը արտասահմանում արժէ՝

Պարսկաստան տարեկան 10 ռ.	6 ամիսը	6 ռ.
Թիւրքիա » 120 դրշ.	6 »	70 դրշ.
Ամերիկա » 6 դոլ.	6 »	3½ դոլ.
Եւրոպա » 30 ֆր.	6 »	18 ֆր.

«ՀՈՐԻԶՈՆ»-ը

Ազատիկ բաժանորդագրութիւն ոչ մի պայմանով չէ ընդունում՝
«ՀՈՐԻԶՈՆ»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Оризонъ“. Հեռ. № 15—57.
Արտասահմանից՝ Tiflis (Russie Caucase) Rédaction du journal «Horizon»

Ծ Ա Ն Ր Լ Ս Ո Ղ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր

„Acousticons“

Երև. սկար աչք ունեցողները կարող են գործածել ակնոցներ, ինչո՛ւ
սկարականց ունեցողները, ծանր լսողները չը պիտի գործածեն ա-
կանջի համար գործիք:

Կատարելագործւած մեքենաներ Ամերիկա-Անգլիական ԱՄԵ-
ՆԱՆՇԱՆԱԻՈՐ ֆիրմայի ամբողջ Ռուսաստանի համար, սկսած
Մոսկուայից հարաւ, ներկայացուցիւն ստանձնել է պ. Տ. Նազար-
եան, որին և ԲԱՅԱՌԱՊԷՍ արտօմոսիւն է սրւած ընդունելու
ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳՆԵՐՈՎ, պատերներ: Գործիքները կուղարկեն Լժու-
ղօնից ուղղակի:

Պայմանները, իմանալու նմուշները տեսնել Գоловин. пр., 41.
Մեքենան ականջի վրայ վործելու համար պէտք է վնարել 3 ռ.
որը պատուէր տալու զէպրում կը հաշի մեքենայի գնի մէջ:

Այցելուները պէտք է կանխաւ ժամայրուրիւն ստանան գրա-
ւոր, ուղարկելով 3 ռ. (0—3)

Ա Ն Փ Լ Ո Ւ Հ Ի

Փորձւած դասատու տալիս է անգլիերէնի և ֆրանսերէնի դասեր:
Հասցէն՝ Бюро Печати. Головин. 41. (3—3)